2010, ՍԵՊՏԵՄԲԵՐ Ա, ԹԻՎ 17 (325)

# Քրիստոնյա Հայաստան

ՄԱՅՐ ԱԹՈՌ ՍՈՒՐԲ ԷՋՄԻԱԾՆԻ
ԿՐՈՆԱԿԱՆ, ՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ,
ԼՐԱՏՎԱԿԱՆ ԵՐԿՇԱԲԱԹԱԹԵՐԹ

## Մայր Աթոռի մանկատան շենքի բացման արարողությունը





Սեպտեմբերի 2-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ տեղի ունեցավ Սբ Գայանե վանքի տարածքում գտնվող Մայր Աթոռ Սբ Էջմիածնի մանկատան շենքի բացման արարողությունը: Շենքը հիմնովին վերանորոգվել է լոնդոնաբնակ Քյուրքչյան ընտանիքի բարերարությամբ՝ ի հիշատակ հոգելույս տիար Զորջ Քյուրքչյանի եւ նրա դուստր Մարինա Քյուրքչյանի:

Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցու կողմից իրականացվող սոցիալական ծրագրերի շարքում մանկատան բացումը հերթական կարեւոր ձեռնարկն է եկեղեցու որբախնամ գործունեության ուղղությամբ: Մանկատունը նախատեսված է կարիքավոր ընտանիքների եւ ծնողազուրկ 42 մանուկների եւ պատանիների համար, որոնք կուսանեն Մայր Աթոռ Սբ Էջմիածնի «Էօրնեկեան» հանրակրթական դպրոցում, կհաճախեն նաեւ Էջմիածնի հայորդյաց տուն: Քյուրքչյան ընտանիքը, Մայր Աթոռի մանկատան շենքի հիմնանորոգությունից բացի, ստանձնել է նաեւ մանկատան հետագա գործունեության հովանավորությունը:

Ներկայությամբ Ջոն Քյուրքչյանի եւ հոգելույս Զորջ Քյուրքչյանի ընտանիքների անդամների, Գերագույն հոգեւոր խորհրդի անդամների՝ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռի միաբանների հետ կատարեց շենքի բացման արարողությունը, որից հետո Նորին Սրբությունը հայրապետական իր խոսքն ուղղեց ներկաներին. *«Աստծո ողորմությամբ հաջողեցինք իրականացնել վերջին ցանկությունը Հայոց եկեղեցու մեծ բարերարի՝ տիար Զորջ Քյուրքչյանի, ով իր մահվան մահճում ցանկություն հայտնեց, որ Ս. Գայանե վանքին կից, ուր ամփոփված են իր ծնողաց աճյունները, կառուցվի մանկատուն՝ խնամատարելու մեր ազգի կարիքավոր զավակներին:*

*Շարունակությունը՝ էջ 2*

## Ն. Ս. Օ. Տ. Տ. ԳԱՐԵԳԻՆ Բ ԱՄԵՆԱՅՆ ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍԻ ՇՆՈՐՀԱՎՈՐԱԿԱՆ ՄԱՂԹԱՆՔԸ ԳԻՏԵԼԻՔԻ, ԳՐԻ ԵՎ ԴՊՐՈՒԹՅԱՆ ՕՐՎԱ ԱՌԻԹՈՎ

**Գիտելիքի, գրի եւ դպրության օրվա առիթով Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից շնորհավորական ուղերձ է հղել մանկավարժներին, ուսանողներին եւ աշակերտներին:**

**Հայրապետական շնորհավորագրում մասնավորապես ասվում է.**

*«Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնից հայրապետական Մեր օրհնությունն ենք հղում համայն մեր ժողովրդին Գիտելիքի, գրի եւ դպրության օրվա առիթով եւ շնորհավորում մանկավարժներին, ուսանողներին ու աշակերտներին ուսումնական տարվա վերաբացման կապակցությամբ:*

*Սիրելինե՛ր, ջանադիր աշխատանքի, գիտելիքների ամբարման նոր տարեշրջան է բացվում ձեզ համար, որը պիտի ծառայեցնեք հարստացնելու ձեր իմացությունն ու կարողությունները, կրթվելու ազգային հոգեւոր արժեքներով, որոնք գիտելիքների հետ մատուցվում են ձեզ նվիրյալ մանկավարժների կողմից:*

*Այսօր շարունակ զարգացող աշխարհի մեջ առավել եւս կարեւորվում են գիտելիքն ու կրթությունը, որ բոլոր ժամանակներում եղել են լույս մտքի եւ հոգու ու պայման մարդկային կյանքի առաջընթացի եւ զորացման: Ուսման մեջ ձեր ձեռքբերումներն այսօր պիտի ծառայեն մեր Հայրենիքի շենացմանը, համայն մեր ժողովրդի բարօրությանը: Ուսանեք սիրով, եւ Աստված ձեր ջանադրության համար առավել պիտի շնորհազարդի եւ օրհնի ձեր կյանքի ուղին:*

*Մաղթում ենք, որ Աստծո օրհնությամբ հաջողություններով առատ լինի նոր ուսումնական տարին, եւ ձեռքբերումներով զարդարվեն սիրեցյալ մեր զավակների ուսումնառությունն ու մանկավարժների գնահատարժան ծառայությունն ազգային մեր կյանքում»:*

## Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ամենայն Հայոց Կաթողիկոսը կատարեց կրթության մշակների օրհնության կարգ



Օգոստոսի 31-ին՝ Գիտելիքի օրվա նախօրեին, Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում, Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ամենայն Հայոց Կաթողիկոսի հանդիսապետությամբ տեղի ունեցավ կրթության մշակների օրհնության կարգ, որով սկիզբ դրվեց մի նոր՝ կրթական ոլորտի երախտավորների օրհնության ավանդության:

Եկեղեցականների թափորն Ամենայն Հայոց Հայրապետին՝ ուղեկցությամբ ՀՀ կրթության եւ գիտության նախարար Արմեն Աշոտյանի, առաջնորդեց Մայր տաճար, ուր կատարվեց մանկավարժների օրհնության կարգ:

Արարողությանը ներկա էին նաեւ ԱԺ կրթության մշտական հանձնախմբի ներկայացուցիչները, ՀՀ կրթության եւ գիտության նախարարության աշխատակիցները, ՀՀ մարզպետարանների կրթության վարչությունների պետերը, ՀՀ բարձրագույն ուսումնական հաստատությունների ռեկտորները, ՀՀ քոլեջների եւ ուսումնարանների տնօրենները, Երեւանի եւ մարզերի դպրոցների ու մանկապարտեզների ներկայացուցիչները, Մայր Աթոռի կրթական հաստատությունների՝ Գեւորգյան հոգեւոր ճեմարանի, Սեւանի Վազգենյան դպրանոցի, «Էօրնեկեան» հանրակրթական դպրոցի տեսչության անդամները:

Արարողության ավարտին Ամենայն Հայոց Կաթողիկոսը հայրապետական իր պատգամն ուղղեց ներկաներին. *«Սրտի անհուն բերկրանքով ողջունում ենք ձեզ այսօր Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում՝ համայն հայության նվիրական այս սրբավայրում, որտեղ սկիզբ է առել հայ դպրության ու գիտության դարբնոցը: Հայրապետիս համար մեծ ուրախություն է այսօր կրթության մշակներիդ հանդիպել եւ հայցել Աստծո առատ օրհնությունը՝ ի բարօրություն հայրենի դպրոցի ու կրթական անդաստանի: Դուք ուսումնական տարվա սեմին Աստծո եւ Փրկչի Իջման սուրբ Սեղանի առջեւ Ձեր ուխտն եք նորոգում այսօր՝ անսպառ եռանդով, աննահանջ սիրով ու անմնացորդ նվիրումով ջամբելու մեր մանկանց իմացությունն ու լույսը հայրենի ավանդների ու հոգեւոր արժեքների:*

*Այսօր կյանքի արագընթաց զարգացումներում, առավել քան երբեւէ, կարեւոր են ուսումն ու գիտելիքը, բայց պետք է հիշել, որ միշտ՝ բոլոր ժամանակներում, կարեւոր են հոգին կրթելը, ճշմարտության եւ բարու մեջ հաստատելը: Արարող ուժ է գիտելիքը, ստեղծագործ զորություն եւ բարիք, երբ ամուր կերպով հաստատված է հավատքի վեմին եւ հոգեւոր արժեքների հիմերի վրա: Ահա այսպիսի ճանաչողությունն է, այսպիսի կրթական դարբնոցն է, որ Ավետարանի խոսքի համաձայն՝ դիմակայում են ժամանակի հողմերի եւ հորձանքների առջեւ: Հոգեւոր արժեքների զորությամբ դարերի փորձությանց բովով ու հրով անցնելով՝ ձույլ ոսկի է դարձել հայ դպրոցը՝ մաքուր ու անաղարտ, ինչպես նրա մեջ կրթվող հայ մանկանց միտքն ու հոգին, որոնց կոչված եք դուք առաջնորդելու: Սիրելինե՛ր, կոչված եք առ Աստված հավատքով սնելու մեր մատաղ սերնդին, սովորեցնելու ճանաչել ու սիրել մեր Հայրենիքն ու Եկեղեցին, հոգալ մարդկանց մասին, ստեղծել ու կերտել, մտածել ուղիղն ու արդարը. այս պետք է լինի կրթության ուղեծիրը, սրանով են լուսավոր եւ առաջատար դարձել ու դառնում ցանկացած ուսում եւ գիտություն:*

*Շարունակությունը՝ էջ 2*

# Մայր Աթոռի մանկատան շենքի բացման արարողությունը

*Սկիզբը՝ էջ 1*

*Այսօր իրականություն է դարձել նրա փափագը, եւ մենք, իր եւ եղբոր ընտանիքների ներկայությամբ, կատարում ենք մանկատան բացման արարողությունը»:*



կարողություններով ու միջոցներով մշտապես զորավիգ է եղել Հայաստանյայց Առաքելական Սբ Եկեղեցուն եւ Մայր Աթոռին:

Այնուհետեւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը, Ջոն Քյուրքչյանը եւ Լոռա Քյուրքչյանը կտրեցին շենքի մուտքի ժապավենը, ապա բարերարները եւ ներկաները ծանոթացան շենքի պայմաններին:

Բացման արարողության ավարտին Սբ Գայանե վանքի գերեզմանատանը՝ Մայր Աթոռի բարերարներ Սարգիս եւ Աստղիկ Քյուրքչյանների շիրիմների կողքին, ամփոփվեց նրանց զավակի՝ Ջորջ Քյուրքչյանի աճյունասափորը: Կատարվեց հոգեհանգստյան կարգ:



Վեհափառ Հայրապետը, հրավիրելով ներկաներին աղոթք հնչեցնելու բարերարի հոգու համար, նաեւ նշեց, որ որոշ ժամանակ անց այս հաստատությունում եւս աղոթք պիտի բարձրանա առ Աստված Քյուրքչյան ընտանիքի համար, որը հայտնի է իր բարեգործ, եկեղեցանվեր ոգով եւ շուրջ կես դար իր

# Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնում Ամենայն Հայոց Կաթողիկոսը կատարեց կրթության մշակների օրհնության կարգ

*Սկիզբը՝ էջ 1*

*Հոգեւոր լույսով սուրբ ու նվիրական է հայ կրթական դարբնոցը, եւ միջնադարյան մեր վանական դպրոցների ավանդության համաձայն՝ այսօր էլ նրանից վեր պիտի փայլի պատվիրանը. «Լոյծ զկօշիկս քո յոտից քոց, զի տեղիդ յորում կաս դու ի դմա՝ երկիր սուրբ է» (Ելից Գ 5): Այն ամենը, որ կարող է խաթարել դպրոցի ազնիվ նկարագիրը, պետք է, ուրեմն, թողնել նրա շեմից դուրս եւ ազնիվ մտքով ու հոգով մտնել այնտեղ՝ լծվելու մանկավարժի երախտավոր գործին:*

*Սիրելի՛ մանկավարժներ եւ կրթական ոլորտի երախտավորներ, այս նվիրական օրը թող լինի մի նոր առիթ ձեր առաքելության մեջ Աստծո առաջնորդությունն ու շնորհները խնդրելու: Վերարժեւորեք ձեր ազնիվ ու պատվական կոչումը, որն իր նվիրական պարունակով ու ավանդությամբ մոտեցնում է ձեզ մեր սուրբ թարգմանիչների փաղանգին՝ պարտավորեցնելով ամեն ուսուցչի մեր զավակների միտքը վարժեցնելու ուղիղը խորհելու, սիրտը՝ բարին զգալու եւ կամքը՝ բարին կամենալու տեռունապատվեր առաքելությունը:*



*Հայրապետիս սրտաբուխ մաղթանքն է, որ Ամենակալ Տերն ամենքիդ պարգեւի անվրդով կյանքի երկար տարիներ եւ բեղմնավոր գործունեություն: Այս առիթով Աստծո ամենառատ օրհնությունն ենք հայցում նաեւ մեր հայրենի պետության կրթական գերատեսչությանց եւ աշխատակիցներին՝ ի դեմս ՀՀ կրթության եւ գիտության նախարար տիար Արմեն Աշոտյանի եւ այստեղ ներկա բոլոր կրթական հաստատությանց սպասավորների, ում ջանքերով են այսօր շարունակում զարգանալ եւ առաջընթաց ապրել հայ դպրոցն ու կրթությունը: Թող Ամենակալ Տերն Իր ամենիմաստ Խոսքով ու Սուրբ Հոգու շնորհներով ամենայն ժամ պայծառ պահի հայոց նվիրական դպրոցի անմար կանթեղը:*

*Բարի ընթացք ու ձեռքբերումներ ենք մաղթում նոր ուսումնական տարում»:*

Այնուհետեւ Վեհարանի հանդիսությունների սրահում տեղի ունեցավ ընդունելություն, որի ընթացքում Նորին Սրբությունը վերստին իր օրհնությունն ու մաղթանքները հղեց մանկավարժներին եւ կրթության ոլորտի սպասավորներին:

## ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը տարակուսանքով եւ ափսոսանքով տեղեկացավ, որ Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցու գմբեթին խաչի տեղադրումը Թուրքիո իշխանությունների կողմից անհիմն պատճառաբանությամբ հետաձգվում է: Մայր Աթոռին վստահեցվել էր, որ սեպտեմբերի 19-ին Սուրբ Խաչ եկեղեցում մատուցվող Պատարագից մեկ շաբաթ առաջ եկեղեցու գմբեթին մնայուն կերպով պիտի զետեղվեր օծված խաչը:

Նկատի առնելով խաչի տեղադրման վերաբերյալ կատարված հավաստիացումների դրժումը՝ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածինը, որ ընդառաջ Կոստանդնուպոլսի Հայոց Պատրիարքության խնդրանքին, սրբազան Պատարագին մասնակցություն պիտի բերեր երկու ներկայացուցչով, առկախում է նրանց մասնակցությունը սեպտեմբերի 19-ին Աղթամարի Սուրբ Խաչ եկեղեցում մատուցվող սրբազան Պատարագի արարողությանը:



# Միջազգային էկումենիկ ժողով Բոսեի վանքում

Սեպտեմբերի 8-11-ն Իտալիայի Բոսեի վանքում տեղի ունեցավ 18-րդ միջազգային էկումենիկ ժողովը՝ «Հաղորդակցություն եւ մենակեցություն» խորագրով:

Ժողովին մասնակցում էր 250 ներկայացուցիչ՝ հոգեւորականներ, վանականներ եւ աշխարհականներ՝ Հռոմի Կաթոլիկ, Ուղղափառ եւ Անգլիկան Եկեղեցիներից:

Մեր Եկեղեցուց ժողովին մասնակցում էր Մայր Աթոռ Սբ Էջմիածնի միաբան Տ. Ռուբեն աբեղա Զարգարյանը:

# Ամենայն Հայոց Կաթողիկոսը հովվապետական այցով մեկնեց ԱՄՆ հայոց Արեւմտյան թեմ

Սեպտեմբերի 5-ին Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսը հովվապետական այցով մեկնեց Ամերիկայի Միացյալ Նահանգների հայոց Արեւմտյան թեմ: Սեպտեմբերի 9-ին Բոստոնում Նորին Սրբությունը հանդիսապետեց Հայոց ցեղասպանության հիշատակին նվիրված հուշակոթողի օրհնության արարողությունը:

Սեպտեմբերի 11-ին, ձեռամբ Վեհափառ Հայրապետի, տեղ ունեցավ թեմի առաջնորդանիստ Ս. Ղեւոնդ նորակառույց եկեղեցու օծման արարողությունը (ք. Բըրբենք): Սեպտեմբերի 12-ին՝ Խաչվերացի տոնին, հանդիսապետությամբ Ամենայն Հայոց Կաթողիկոսի, նորաօծ տաճարում մատուցվեց Պատարագ:

Ամենայն Հայոց Կաթողիկոսին ուղեկցում են Կոտայքի թեմի առաջնորդ Տ. Առաքել եպս Քարամյանը, Գեղարքունյաց թեմի առաջնորդ Տ. Մարկոս եպս Հովհաննիսյանը, Մայր Աթոռի Քրիստոնեական դաստիարակության կենտրոնի տնօրեն Տ. Վարդան աբեղա Նավասարդյանը, Մայր Աթոռի «Էջմիածին» պաշտոնական ամսագրի փոխխմբագիր Տ. Շահե աբեղա Անանյանը, Օտարալեզու մամուլի բաժնի պատասխանատու Տ. Կտրիճ քահանա Դեւեջյանը եւ Տ. Անանիա աբեղա Ծատուրյանը՝ իբրեւ գավազանակիր:



**Մայր Թերեզան հողդոդում է**

# Մայր ԹԵՐԵԶԱ - 100

**Այս փոքրամարմին ու վտիտ կնոջ առջեւ խոնարհվում էին աշխարհի մեծերն ու հզորները, քանզի նրա մեջ ապրում էր անպարփակ Սերն ու Գութը՝ Հիսուս Քրիստոսը: Նա իր ողջ կյանքն անվերապահորեն ապրեց Տիրոջ պատվիրանների համաձայն՝ «Իմ լուծը ձեզ վրա վերցրե՛ք եւ սովորե՛ք Ինձանից, որ հեզ եմ եւ սրտով խոնարհ, եւ ձեզ համար հանգիստ պիտի գտնեք, որովհետեւ Իմ լուծը քաղցր է, եւ Իմ բեռը՝ թեթեւ» (Մատթ. ԺԱ 29-30) եւ «Ճշմարիտ եմ ասում ձեզ, քանի որ Իմ այս փոքր եղբայրներից մեկին արեցիք այդ, Ի՛նձ համար արեցիք» (Մատթ. ԻԵ 40):**

**Նա, թերեւս, մեր ժամանակների ամենաերջանիկ մարդն էր, քանզի նա իր արածի վարձը բացառապես Աստծուց էր ակնկալում:**

▼ Կյանքը հնարավորություն է՝ օգտագործե՛ք այն:

▼ Կյանքը գեղեցկություն է՝ հիացե՛ք նրանով:

▼ Կյանքը երանություն է՝ ճաշակե՛ք այն:

▼ Կյանքը երազանք է՝ իրականացրե՛ք այն:

▼ Կյանքը մարտահրավեր է՝ ընդունե՛ք այն:

▼ Կյանքը պարտականություն է՝ կատարե՛ք այն:

▼ Կյանքը խաղ է՝ խաղացե՛ք նրանում:

▼ Կյանքը հարստություն է՝ փայփայե՛ք այն:

▼ Կյանքը սեր է՝ ըմբոշխնե՛ք այն:

▼ Կյանքը խորհուրդ է՝ ըմբռնե՛ք այն:

▼ Կյանքը շանս է՝ օգտվե՛ք դրանից:

▼ Կյանքը վիշտ է՝ հաղթահարե՛ք այն:

▼ Կյանքը պայքար է՝ դիմացե՛ք դրան:

▼ Կյանքը արկածախնդրություն է՝ հանձնառո՛ւ եղեք:

▼ Կյանքը ողբերգություն է՝ դիմացե՛ք դրան:

▼ Կյանքը երջանկություն է՝ կերտե՛ք այն:

▼ Կյանքը չնաշխարհիկ է՝ մի՛ կործանեք այն:

▼ Կյանքը կյանք է՝ պայքարե՛ք վասն դրա:

## ԱՄԵՆ ԴԵՊՔՈՒՄ

▼ Մարդիկ անխոհեմ են, անտրամաբանական ու եսակենտրոն, բայց ամեն դեպքում սիրի՛ր նրանց:

▼ Երբ բարիք ես գործում, մարդիկ քեզ կմեղադրեն անձնասիրության հետին նպատակների մեջ, բայց ամեն դեպքում բարիք գործի՛ր:

▼ Եթե հաջողակ ես, ապա կեղծ ընկերներ ու թշնամիներ կվաստակես, բայց ամեն դեպքում հաջողի՛ր:

▼ Կատարած բարիքդ վաղը կմոռացվի, բայց ամեն դեպքում բարիք գործի՛ր:

▼ Ազնվությունն ու անկեղծությունը խոցելի են դարձնում քեզ, բայց ամեն դեպքում եղի՛ր անկեղծ ու ազնիվ:

▼ Իրավ է, որ մարդիկ օգնության պետք ունեն, սակայն եթե օգնես, կարող են հարձակվել քեզ վրա, բայց ամեն դեպքում օգնի՛ր նրանց:

▼ Տարիների քո կառուցածը կարող է մեկ գիշերում փլուզվել, բայց ամեն դեպքում կառուցի՛ր:

▼ Քո ունեցած լավագույնը տուր աշխարհին, եւ աշխարհը կփշրի քո ատամները, բայց դու տուր աշխարհին քո լավագույնը:



# ԱՏՈՄ ՅԱՐՃԱՆՅԱՆ (ՍԻԱՄԱՆԹՕ)



*Սկիզբը՝ թիվ 15-16*

Բանաստեղծը չի հանդարտվում, որովհետեւ չի հանդարտվում հողի ընդերքից հնչող տագնապալի կանչը: Մի վերջին պոռթկումով նա շարունակում է խոսել իր վարանոտ զավակների հետ, շարունակում է ներգործել նրանց մտքի եւ հոգու վրա, որովհետեւ հողը երկրի պատմության վկան է, իսկ նրա զավակները միշտ չէ, որ պատմության հիշողության կրող են: Այդպես է՝

*Որովհետեւ, ավա՜ղ, միայն ես գիտեմ, թե*
*արյունի ի՜նչ անագորույն սահանքներ,*
*Իմ յոթը խավերուս աղջամուղջներուն*
*խորը սուզվելով,*
*Յարստությանս հիմունքները*
*անողորմաբար ոռոգեցին...*
*Միայն ես գիտեմ իրարու ետեւե*
*անվերջորեն հոգիիս խորը մխրճվող*
*Կիսաբաց դագաղներուն ճարճատյունն*
*ահաբեկիչ...*
*... Եվ վերջապես միայն ես գիտեմ*
*կուտակումներն այն կմախքներուն,*
*Որոնք սրտիս խորքերուն մեջը ո՜ր*
*ժամանակներեն ի վեր,*
*ո՜ր ժամանակներեն ի վեր*
*Այնչափ մրրկոտորեն արմատացա՜ն,*
*անտառվեցա՜ն...*

Այս ամենից հետո հողը վերջին խոսքով դիմում է «մաքառողներին» եւ այս «ավետիսը» տալիս: Ասում է՝ դո՛ւք, որ իմ հավատարիմներն եք, ուխտավորներն ու հարազատները, դո՛ւք, որ ձեր արյունը տվեցիք ինձ, դո՛ւք, որ երբեք դասալիք չդարձաք՝

*Ձեզի եմ, սրտապնդվեցե՛ք,*
*հուսադրվեցե՛ք, խաչակնքվեցե՛ք,*
*Քանզի իրենց փախուստներեն*
*խղճահարված ձեր եղբայրները բոլոր,*
*Ահավասի՜կ կը հասնին. Ատելությենե*
*հրաշացած ու Սիրով արբշիռ*
*Եվ արշալույսին հուրերուն մեջեն իրենց*
*երկաթյա ձեռքերը ձեր ձեռքերը կը*
*փնտռեն...*

«Յողին ձայնը» շատ խոր ընդգրկում ունեցող եւ գեղարվեստական բարձր վարպետությամբ գրված բանաստեղծություն է: Յայրենիքի փրկության գաղափարն այստեղ հնչում է որպես օրհներգ, այդ գաղափարն այստեղ փողփողում է որպես ազատության դրոշակ:

Շարքը շարունակվում է «Ձղջումի թափորը» բանաստեղծությամբ, որի մեջ Յայորդին, թշնամուց նեղված, հայրենիքը լքող մարդկային զանգվածներին վերադարձի կոչ է անում. *«Ձեզի եմ, դեպի ե՛տ, դեպի ե՛տ, դեպի ե՛տ արշավենք, // Մեր թմրութենեն եւ մեր սարսափեն առնաբար սթափվելով...»*: Այնուհետեւ միանման պատկերների հաջորդականությամբ նա վերստին հերոսացումի կոչ է անում. *«Թո՛ղ մեր քայլերը հնչեն, եւ մեր վրեժի եւ քաղցի աղաղակը որոտա»*: Թո՛ղ, թո՛ղ, թո՛ղ՝ արձագանքում են հաջորդող տասը տողերը: Իսկ շարունակության մեջ արդեն առկայծում է հաղթության հույսը, որի մեջ է բոլորի փրկության հավատը: Յաղթանակի հավատն այնքան ուժգին էր բանաստեղծի մեջ, որ «Կովկաս» քերթվածն սկսում է այդ ոգեւորությամբ. *«Ի՜նչ ոսկեղեն դարագլուխ է այս, եւ շղթաներու ի՜նչ զայրագին փշրում...»*: Սա ռուսական ինքնակալության դեմ ժողովրդական զանգվածների ըմբոստացման ցույցն է, որ ընթացք է առնում իշխանությունները տապալելու կոչով. *«Ձա՛րկ, Կովկա՛ս, ավերակյալ ու արցունքոտ Յայաստանին աչքերը քեզի կնային... // Ձա՛րկ, ազատաբեր հարվածիդ շռինդը Մասիսեն ի Տավրոս եւ մինչեւ Յայրենիքի խորերը կը թնդա»*:

Սա պատմության ա՛յն կեռմանն է, երբ ահաբեկիչները հերոսներ են, նրանց պետք է փառաբանել, որովհետեւ նրանք ազատության զինվորներ են՝ ընդդեմ չարիք տարածող թշնամու: *«Մա՛հ, այդ թագակիր, բայց արդեն ահաբեկյալ եւ կիսամեռ դահճապետերուն»*,- ազդարարում է բանաստեղծը:

Այս տրամադրություններն աստիճանաբար ուռճանում են ամբողջ շարքի մեջ եւ մարմնավորվում «Մենախոսություն», «Որբերու ճակատագրեն», «Սովամահ», «Բանտերուն խորերեն» եւ այլ քերթվածների մեջ: Ձեւավորվում է գործողությունների, տրամադրությունների դիպաշարը, որը հոգեբանական եւ գաղափարական շարժման մեջ է պահում խոսքի ներքին զարգացումը: Նրա առջեւ է թշնամին, որն ընկած է ցեխի մեջ եւ ցեխն է ապականում («Կախաղաններու կատարեն»), նրա առջեւ են հայ դավաճանները՝ որպես «հրեշածին հայ Յուդա», եւ նրանց համար է ասած՝ «Մեռելներ կան, որ պետք է անգամ մը եւս մեռցնել...» («Դավաճանները»):

**«Յոգեվարքի եւ հույսի ջահեր», 1907:** Շարքը բացվում է «Մահվան տեսիլք» բանաստեղծությամբ: Աշխարհի հնագույն ժողովուրդներից մեկն իր պատմական հայրենիքում, հազարամյակներով ստեղծած իր քաղաքակրթության բնօրրանում կեղեքվում, խոշտանգվում եւ կոտորվում էր թուրք ջարդարարների կողմից: Դարերի ընթացքում այդ վայրենի ուժը ստրկացրել էր հայ ժողովրդին եւ հիմա իրականացնում էր վաղեմի ծրագիրը՝ կոտորածների միջոցով փորձելով գտնել հարցի լուծման արյունոտ վերջաբանը:

*Կոտորա՜ծ, կոտորա՜ծ, կոտորա՜ծ...*
*Քաղաքներուն մեջ եւ քաղաքներեն դո՜ւրս,*
*Եվ բարբարոսներն արյուններով*
*կը դառնան,*
*Մեռելներուն եւ ոգեվարներուն վրայեն,*
*Ագռավներու բազմություններ*
*կ'անցնեն վեհեն,*
*Արյունոտ բերաններով ու գինովի*
*քրքիջներով...*
*Ցամաքահով մը կիսամեռները*
*զայրույթով մը կխեղդե,*
*Ու պառավներու անձայն կարավաններ*
*Շտապով կը փախչեն լայն ճամփաներեն...*
*Գիշերին մեջեն արյուններու ալիք*
*կը բարձրանա՝*
*Ծառերուն հետ շատրվաններ*
*ուրվագծելով,*
*Ու ամեն կողմե սոսկումով*
*կը սուրան հալածված՝*
*Նախիրները հրդեհվող*
*ցորյաններուն մեջեն...*
*Փողոցներուն մեջ մորթված սերունդներ*
*կը տեսնեմ,*
*Եվ ամբոխներ անպատմելի սրածութենե*
*դարձող,*
*Արեւադարձային տաքություն մը կը*
*բարձրանա*
*Յրդեհի տրված ազնվական*
*քաղաքներեն...*
*Ու մարմարի ծանրությունով իջնող*
*ձյունին տակ,*
*Ավերակներուն եւ մեռելներուն*
*մենությունը կը մսի,*
*Օ՜, մտի՜կ ըրեք սա սայլերուն ճռնչյունն*
*ահավոր,*
*Իրենց վրա դիզված դիակներուն տակ,*
*Ու սգավոր մարդերուն աղոթքներն*
*արցունքոտ,*
*Որ կածանե մը դեպի համայնափոսերը*
*կ'երկարին.*
*Մտի՜կ ըրե՜ք հոգեվարքներուն ձայները*
*վերջին,*
*Յովին հարվածներուն մեջ, որ ծառերը*
*կը ջարդե,*
*Օ՜, մի՜ մոռնաք, մի՜ մոռնաք, մի՜ մոռնաք,*
*Չըլլա, որ մոտենաք գերեզմանոցներուն*
*եւ ծովուն,*
*Կարմիր ջուրերուն վրա նավեր*
*կը նշմարեմ հեռուն,*
*Մեռելներու կուտակումներ անոնց*
*մեջ կան,*
*Ու ցավեն գալարվող ալիքներուն վրա*
*Գանգեր ու սրունքներ ինծի կ'երեւան...*
*Մտիկ ըրե՜ք, մտիկ ըրե՜ք, մտիկ ըրե՜ք*
*Փոթորիկին գոչը ծովուն ալիքներուն մեջ,*
*Կոտորա՜ծ, կոտորա՜ծ, կոտորա՜ծ...*
*Մտիկ ըրե՜ք, մտիկ ըրե՜ք, մտիկ ըրե՜ք*
*Մահածայն ոռնումը զարհուրյալ*
*շուներուն,*
*Յովիտներեն ու գերեզմաններեն*
*ինծի հասնող,*
*Օ՜, պատուհանները փակեցեք ու*
*աչքերնիդ ալ,*
*Կոտորա՜ծ, կոտորա՜ծ, կոտորա՜ծ...*

Այս բանաստեղծության մեջ Յարճանյանն ուրվագծում է ահավոր ոճիրի իրական պատկերը: Կոտորածը ոչ միայն դառնում է ասելիքը խտացնող բառ-խորհրդանշան, այլեւ կոտորածը տոգորվում է կենսական բովանդակությամբ: Բարբարոսը թշնամին է՝ թուրքը, որը վերադառնում է արյունոտ բերանով գիշատիչի նման: Ցամաքային տաք խորշակը խեղդում է անպաշտպան կիսամեռ մարդկանց: Ովքեր կարող են՝ փախչում են նախճիրից: Գիշերով ծառերը, ասես, դառնում են արյունոտ շատրվաններ:

*Շարունակությունը՝ էջ 6*

## ՀԱՅՈՑ ԿԱԹՈՂԻԿՈՍՆԵՐ

# ՓԻԼԻՊՈՍ Ա ԱՂԲԱԿԵՑԻ (1632-1655)

*Սկիզբը՝ էջ 3*

Երուսաղեմյան հանդիպումը կարեւոր էր Յայոց Եկեղեցու համար: Մարտիրոս Ղրիմեցու հաղորդմամբ՝ Փիլիպոս կաթողիկոսի հետեւորդ վարդապետներից էին Դավիթ Շոշեցին, Բարսեղ Շոշեցին, Ներսես Տաթեւացին, Առաքել Շոռոթեցին, Գաբրիել Երեւանցին, Յովհան Երեւանցին, Յովհաննես Մուղնեցին, որը Տիգրանակերտի առաջնորդն էր, Յովհան Արզնեցին, Գաղատիայի առաջնորդ Մինաս Եվդոկացին, Գրիգոր Վանեցին, Ավետիս Վանեցին, Խաչատուր Բաղիշեցին, Թորոս Կեսարացին եւ Նիկողոս Կեսարացին: Ներսես կաթողիկոսի հետեւորդներից հիշվում է միայն Բերիայի առաջնորդ Խաչատուր վարդապետը: Թեմակալ եպիսկոպոսներից հիշվում են Վանի Սահակը, Սասունի Մարկոսը, Ակնի Յովհաննեսը, Մոկաց Ստեփանոսը, Բաղեշի Միքայելը եւ Սսի Պետրոսը: Երուսաղեմի միաբաններից, բացի Աստվածատուր պատրիարքից, հիշվում են Խաչատուր Չնքուշեցին, Առաքել Բաբերդցին, Թորոս եպիսկոպոսը եւ Օնոփրիոս Լեհացին: Երուսաղեմի գումարմանը մասնակցել են 2 կաթողիկոս, 18 վարդապետ, 8 եպիսկոպս եւ 35 աբեղա, ինչպես նաեւ 60 քահանա, իսկ ժողովրդական ուխտավորների թիվն անցել է 1000-ից, որոնք, չգիտես ինչու, հայտնվել են ժողովականների կազմում: Այդտեղ էլ տեղի ունեցավ երկու աթոռների հաշտությունը:

Դավրիժեցին պահպանել է այդ ժողովում ընդունված կանոններից միայն 13-ի բովանդակությունը: Նա տվել է դրանց համառոտ շարադրանքը, որոնք համընդհանուր կանոններ չեն, այլ երկու կաթողիկոսությունների հաշտության 13 գլուխներ: Այսուհանդերձ՝ Մ. Օրմանյանը հակված է դրանք կանոնական որոշումներ տեսնելու: Յիմնական խնդիրը եղել է Էջմիածնի եւ Սսի կաթողիկոսական աթոռների միաբանությունը: Դրանով վերջ էին գտնում հատկապես Սսի աթոռի զանազան զեղծումները:

Իսկ ո՞րն էր 13 կանոնների բովանդակությունը:

Եթե ի մի բերենք դրանք, ապա յուրաքանչյուր կաթողիկոսական աթոռ կարող էր իր վիճակի կրոնավորներին ձեռնադրել իր վիճակի եպիսկոպոս: Յակառակ դեպքում դա անընդունելի կլիներ: Այդ պատճառով Սսի կաթողիկոսից ձեռնադրվածները չէին կարող Էջմիածնի վիճակում պաշտոն զբաղեցնել: Մի աթոռի ձեռնադրվածը չէր կարող մյուս աթոռին դիմել: Առանց ժողովրդի խնդրանքի եւ առանց վկայականի որեւէ մեկը չէր կարող եպիսկոպոս ձեռնադրվել: Որեւէ եպիսկոպոս չէր կարող հիշատակվել մյուսի վիճակում: Մի վիճակում չէին կարող լինել երկու եպիսկոպոս կամ երկու առաջնորդ, եթե դրա համար ինչ-որ մեծ պատճառ չկար: Թեմակալի կենդանության օրոք ուրիշ թեմակալ չէր կարող ձեռնադրվել, մինչեւ առաջինը չհեռանար կամ ծանր հանցանքի համար չհեռացվեր: Եպիսկոպոսներն իրենց վիճակից չեղողներին չէին ձեռնադրում, իսկ եթե ձեռնադրեին, ապա ինքն է՛լ, ձեռնադրվածն է՛լ կարգալույծ էին արվում: Եթե այլ վիճակայինին ձեռնադրեր, ապա պետք է տեղավորեր իր վիճակում: Եթե եպիսկոպոսը կաշառքով եւ այլազգիների բռնությամբ վիճակի տիրանար, ապա պետք է կարգալույծ արվեր: Մեծ վարդապետը ուրիշի իշխանություն վարդապետության տալ չէր կարող, եթե նա կատարյալ



ուսմամբ եւ առաքինությամբ աչքի չէր ընկնում: Յայտնի է, որ վարդապետություն տալու իրավունքն օրենքով մեծ վարդապետինն էր եւ ոչ թե եպիսկոպոսինը, քանի որ դա ուսումնական աստիճան էր եւ ոչ թե եկեղեցական ձեռնադրություն: Ուշ շրջանի պահանջով՝ տվողը միաժամանակ պետք է եպիսկոպոս եւ ծայրագույն պատրիարք լինի: Իսկ թեկնածուն պետք է բավարարեր չորս պայմանի՝ ուսում, առաքինություն, տարիք եւ օրինավոր վկայական: Քահանաները, սարկավագները եւ դպիրները պետք է ձեռնադրվեին իրենց եպիսկոպոսից՝ ժողովրդի հովանավորությամբ: Այդպես չլինելու դեպքում կարգալույծ էին արվելու: Եպիսկոպոսները եւ քահանաները ժողովրդից հասույթը հավաքելիս պետք է գործեին ըստ կաթողիկոսական կանոնների եւ չպետք է ժողովրդի մեջ տրտունջ առաջ բերեին: Քահանաները չպետք է իրարից ծխեր հափշտակեին ո՛չ կեղծավոր բարեձեւությամբ եւ ո՛չ էլ այլազգիների բռնությամբ, այլապես կարգալույծ կարվեին: Ամուսնության դեպքում պետք է զգույշ լինեին, որ ազգակցության պարագաներ մեջտեղ չգային, եւ ամեն ինչը լիներ հրապարակավ: Այրի քահանաները, եթե պարկեշտ էին ու ծեր, կարող էին իրենց քահանայական պաշտոնը շարունակել, եթե ոչ՝ պետք է գնային վանք կամ անապատ: Ճգնելու դեպքում ժառանգությունից ու կարգից պետք է հրաժարվեին: Այլ խոսքով՝ այրի քահանան չէր կարող ամուսնանալ եւ պետք է ամուսնության դեպքում հրաժարվեր եկեղեցական կարգից: Յիշյալ կանոնների մեջ Էջմիածնի գերագահության մասին ակնարկ անգամ չկա: Դա Փիլիպոսի կողմից դիվանագիտական լռելյայն ակտ էր: Յարցերն այնքան շատ էին, որ կնճռոտել նաեւ այդ խնդրով՝ իմաստ չուներ: Էլ չենք ասում նաեւ այն մասին, որ բոլորն էլ ուղղակի կամ անուղղակի ճանաչում էին Ամենայն Յայոց կաթողիկոսության առաջնությունը:

*Շարունակելի*

***Բաբկեն ՅԱՐՈՒԹՅՈՒՆՅԱՆ***
***ՅՅ ԳԱԱ թղթակից անդամ, պրոֆեսոր***

# ԹՈՒՄԱՆՅԱՆԻ «ԱԽԹԱՄԱՐԻ» ՍՏԵՂԾԱԳՈՐԾԱԿԱՆ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ

*Սկիզբը՝ էջ 3*

Այս ժայռը հիշում է եւ Գարեգին եպիսկոպոս Սրվանձտյանցը, որի հետ կապված պաշտամունքային հին եւ նոր շերտերն իրար է միահյուսում հոսող ժամանակի պատկերով, որը Գագկաշեն Ս. Խաչի Աստվածակիր Սուրբ Նշանից ծգվում եւ հասնում է մինչեւ հին պաշտամունքային «աստղունքը» եւ Արուսյակը. «Քեզ ուխտ պիտի գայի, ով Գագկաշեն մեծագործ տաճար, քեզ հերկրպագություն՝ ով Աստվածակիր սուրբ Նշան, քեզ ի զմայլումն ով ժայռ խորհրդավոր, ժայռ, որու վրա կը կենա մրրկաց Հրամանատուն, ուր Լուսինն եւ աստղունք ծովը իջնալու եւ ծովեն ելլալուն կը հանգչին գովասուն, ուր Արուսյակն իր քողը կը ծգե, եւ արեգակն իր պատմուճան կ'արկանե իրիկուն եւ առավոտուն. Վայր աննման»:



Անհրաժեշտ է նշել, որ թե՛ այստեղ եւ թե՛ «Ախթամարի» մի շարք տարբերակներում ընդգծված ձեւով հիշվում են աստղերը, որը պատահական չէ եւ ոչ էլ միայն ծովային գիշերվան համահունչ բանաստեղծական պատկեր: Աստղերը դժբախտ սիրո այս պատմությունը մի կողմից կապում են Լեյլիի ու Մեջնունի՝ Արեւելքի երկու մեծ եւ դժբախտ սիրահարների աստղերի հետ, որոնք այնպես պայծառորեն են ցոլում Անուշի վերջաբանը եղող Համբարձման գիշերվա տեսարանում, իսկ մյուս կողմից Վանա ծովակից անցնում են դեպ Մշո դաշտ՝ Արածանիի ափերը, որոնք մեգ ու մշուշով էր պատում այնտեղ լողացող Աստղիկ դիցուհին, որ իրեն չտեսնի Վահագն դյուցազնը: Ինչպես իր հուշերում գրում է Թումանյանի դուստրը՝ Նվարդ Թումանյանը, 1919 թ. դեկտեմբերի 16-ի ներքո. «Հավաքված էինք հայրիկի սենյակում, մեր ընտանեկան հերթական գրական երեկոներից էր. կարդաց մի հատված Նիզամու «Լեյլի եւ Մեջնունից» ու հետո սկսեց իր զրույցը. «Սա Արեւելքի «Ռոմեո եւ Ջուլիետն է», անմուրազների սերը: Սկսվում է էն երգով, ինչ երգով ես իմ «Անուշն» եմ վերջացրել»:

Ինչ վերաբերում է Աստղիկին, ապա նրա ուղղակի կապը խեղդվող սիրահարի ավանդությանը վկայված է «Մշո դաշտ» վերնագրված («Լումա», 1898, հմ. 2) հոդվածում, որում այն միտքն է հայտնվում, որ հնում գոյություն է ունեցել «Տաղոնաց եւ Աստղնբերդի սիրահարական վեպը, որում Տարոն դաշտը ծով կը նկարագրե, եւ սիրուհին՝ Աստղիկ, ճրագը թաքուցանելով, իր Տաղոնցի արքայազուն սիրահարի ծովուն մեջ խեղդվելուն պատճառ կըլլա»: Այս ավանդության մասին տողատակում բերված ծանոթության մեջ հոդվածագիրն այնուհետեւ գրում է. «Աստղկա սիրահարը առասպելյալ չաստված մը կը կարծվի, որուն արձանը եւ Տաճարը եղած պիտի ըլլան Տաղոնաց մեջ՝ հայոց դիցաբանության ատենը»: Այսպիսով, համաձայն այս ավանդության, Տաղոնը՝ Տարոնը, սիրում է Աստղիկին եւ Ախթամարի պատմության նման այստեղ եւս Տարոնը ափից ափ է եկել Աստղիկի համար՝ որպես փարոս ունենալով նրա վառած կրակը: Մի անգամ Աստղիկը ճրագը թաքցրել է, եւ Տարոնը խեղդվել էր: Ճրագը միտումնավոր թաքցնելու պատճառով Տարոնի խեղդվելը հիշեցնում է Աստղիկի Արածանիի ափերը մշուշով պատելը, որ Վահագնը իրեն չտեսնի, եւ այստեղից է նաեւ *Մուշ* բառի որպես մշուշ ժողովրդական ստուգաբանությունը: Այս պատմության ծիսա-դիցաբանական ու հին հավատալիքային ակունքներն է հիշեցնում եւ այն, որ ասվում է, թե Տարոնի տաճարներից մեկում կանգնեցված է եղել այս սիրահարի արձանը:



Աղթամարի եւ Աստղիկի հետ է հարաբերվում եւ Վահան վարդապետ Տեր-Մինասյանի «Անգիր դպրութիւն եւ առակք» (1893 թ.) գրքի առաջին հատորում հրատարակված ժողովրդական այն ստեղծագործությունը, ուր ասվում է.

*Մանչեր ելան, հուր վառեցին,*
*հուր վառեցին, օր տոնեցին,*
*Օր տոնեցին, ծափեր զարկին,*
*Ծափեր զարկին, որոտացին*
*Ա՛հ, Աստղիկ*
*Մեր հարսիկ:*

Այս տեղծագործության ծանոթագրությունում Վահան վարդապետը գրում է. «Մշո դաշտն ամառ ու ձմեռ մշուշով պատվելուն պատճառ կ'ավանդվի Աստղկա այգուն [այգաբացին] կանուխ ի լոգարան մտնելն, որով հարկ կը լինի եղեր մշուշներու դաշտը պատել Աստղկա մերկությունը ծածկելու համար:

Կը պատմվի, թե Աստղկա առաջին անգամ ի լոգարան մտած ատեն սիրահար աշուղ մը երգած լինի, եւ այնքան զմայլագին երգեր կ'երգե, որ ի լուր ձայնին հայ պատանիներ եւ աղջիկներ լույս առնելով եւ խարույկ վառելով ի տես նորա գեղեցկության կը փութան: Աստղիկ ամոթահար կը ստիպվի մշուշ իջեցնել երկնքեն եւ գինքը ծածկել հետաքրքիր աչերե: Սույն մշուշը գրեթե միշտ կա, այգուն [լուսաբացին] քանի մը ժամ միայն»:

Աստղիկի հետ կապված՝ Վահան վարդապետը հիշում է նաեւ «Ծովասարը», որ ունի լիճ եւ աննման խավարծիլ», որը եւս ազգագրական մշակույթում սիրահարներին տրվող կերակուր է:

Վահան վարդապետի վերը բերած ավանդությունում գտնում ենք Աստղիկի՝ սիրահար պատանուց խուսափելու համար կրակը հանգցնելու ուղղակի արձագանքը:

Անհրաժեշտ է նշել, որ գրեթե յուրաքանչյուր լիճ ունի ափից ափ լողացող պատանու այս պատմությունը, որը փոթորկալից ամեն ափի, ասես, վերարտադրվում է բնության ահեղ տարերքով: Ասվածը վերաբերում է եւ Փարվանային, որը ոչ միայն ծնունդ է տվել Թումանյանի նույնանման չքնաղ ստեղծագործությանը, այլեւ ունի Ախթամարի ավանդության յուրօրինակ մի տարբերակը, որի արձագանքը մինչեւ Վանա ծովակի ափերն է հասնում:

*Շարունակելի*

***Վարդան ԴԵՎՐԻԿՅԱՆ***
***Բանասիրական գիտ. թեկնածու***

# ԿՐՈՆՆԵՐԸ ՀԱՅԱՍՏԱՆՈՒՄ

Հայաստանում գործող կրոնական փոքրամասնությունների իրավունքների պաշտպանությամբ զբաղվող կազմակերպություններն այսօր նախանձելի հաճախականությամբ արձանագրում ու համացանցում զեկույցների տեսքով տեղադրում են իրենց ուսումնասիրությունները: Սակայն այդ էջերում սովորաբար անտեսված է մնում մեծամասնության իրավունքի պաշտպանությունը: Մեր պետության եւ միջազգային ատյանների հասարակական ու իրավական բոլոր հնարավոր լծակներն օգտագործվում են ապահովելու համար կրոնական փոքրամասնությունների թույլատրելի իրավունքների պահպանումը, սակայն քննարկման չեն դրվում նրանց պարտականությունների վերաբերյալ հարցերը: Այս առումով մեծ խոչընդոտ է նաեւ կրոնական փոքրամասնությունների գործունեությունը կարգավորող ՀՀ օրենքը, որը, ըստ ՀՀ Կառավարության աշխատակազմի ազգային փոքրամասնությունների եւ կրոնի վարչության պետ Վարդան Ասցատրյանի, ոչ միայն չի սահմանում կրոնական փոքրամասնությունների պարտականությունները, գործունեության սահմանափակումները, այլեւ որեւէ կերպ չի տարբերակում ամերիկյան նորաբույս մի աղանդ, ազգային փոքրամասնությունների կրոնական համայնքներից ու Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցուց: «ՀՀ-ում այսօր գրանցված կրոնական կազմակերպությունները 66-ն են. այդ թվում՝ Հայ Առաքելական Սուրբ Եկեղեցին, Կաթոլիկ Եկեղեցին, ազգային փոքրամասնությունների կրոնական հաստատությունները՝ եզդիական ավանդական, հրեական, ասորական կրոնական համայնքները, բողոքական հոսանքները՝ 30-ից ավելի կրոնական կազմակերպություններ եւ մի շարք նոր ձեւավորված կրոնական ուղղություններ»,- տեղեկացրեց Վ. Ասցատրյանը: Նա հավելեց նաեւ, որ դա չի նշանակում, թե կրոնական այլ խմբավորումներ, համայնքներ չկան. Նշված 66-ը նրանք են, որ դիմել են գրանցման համար եւ գրանցվել են, բայց որոշներն էլ կա՛մ գրանցված չեն, կա՛մ գրանցված են՝ որպես հասարակական կազմակերպություն՝ օրինակ չիևական «քրիստոնեական» համայնքը՝ Մունի Եկեղեցին: Այս պարագայում, փաստորեն, նրանք իրավունք չունեն կրոնական գործունեություն իրականացնելու: Սակայն ՀՀ Կառավարությանն առընթեր համապատասխան վարչությունը կարող է ստուգումներ կատարել, եթե քաղաքացիները պաշտոնական բողոք ներկայացնեն: Հարկ է նկատել, որ մինչ օրս ոչ ոք այս հարցով չի դիմել:

Օրենքը եւս մեկ լուրջ բացթողում ունի կրոնական կազմակերպության անվան ընտրության առումով. հասարակական կազմակերպությունների համար կա որոշակի կարգ, համաձայն որի՝ եթե կազմակերպության անունն առնչվում է հեղինակավոր անձանց կամ կազմակերպությունների անունների հետ, խնդիրը քննվում է հատուկ կարգով, արգելվում է կամ թույլատրվում: Կրոնական կազմակերպության պարագայում, սակայն, այդ կարգը չի գործում:

ՀՀ «Խղճի ազատությունների եւ կրոնական կազմակերպությունների մասին» օրենքի հինգերորդ կետում սահմանվում են կրոնական կազմակերպությանը բնորոշող չորս կետերը: Կառավարության կողմից լիազորված՝ կրոնի գործերով պետական մարմինը փորձաքննության է ենթարկում ներկայացված փաստաթղթերը՝ պարզելու, թե արդյոք դրանք համապատասխանո՞ւմ են այն չորս կետերին. այսինքն՝ կազմակերպությունն ունի՞, արդյոք, 200 անդամ, պատմականորեն կանոնացված սուրբ գիրք, ուղղվա՞ծ է միայն հոգեւոր ոլորտին եւ չունի՞, արդյոք, նյութապաշտություն: Բայց, ինչպես ակնհայտ է, սրանք, հետեւորդների թվաքանակից բացի, բավականին ընդհանուր, անչափելի չափորոշիչներ են: Դրանից հետո կազմակերպությունը փորձագիտական եզրակացության հիման վրա պետական ռեգիստր պահանջ է ներկայացնում՝ գրանցման համար: Վ. Ասցատրյանը հիշեցրեց, որ փորձագիտական եզրակացությունը նշված չորս կետերով մերժել էր հայտերից վերջինը՝ «Եհովայի վկաներ» կազմակերպությանը: «Այս հայտին մենք բացասական վերաբերմունք էինք արտահայտել եւ ցույց տվել, որ այս կազմակերպության գրանցմամբ խախտվում են օրենքի այլ դրույթներ, բայց քանի որ Հայաստանը Եվրոպայի միության անդամ դառնալու համար պարտավորություն էր ստանձնել, մենք չպնդեցինք, որ Եհովայի վկաները մեր օրենքները լիովին պահեն, հետո նոր գրանցենք»,- նշեց նա: Իսկ «Եհովայի վկաները» ո՛չ պահեցին, ո՛չ պահում են, ո՛չ էլ պատրաստվում են պահելու ՀՀ որոշ օրենքներ:



Եթե համացանցում այսօր «Հայաստանի կրոնները» կամ համանման արտահայտությամբ «փնտրում» սկսեք, հղումն անմիջապես ձեզ կառաջնորդի «Բաց հասարակության ինստիտուտի» հովանավորյալ www.religions.am կայքը: Հայաստանաբնակ մարդու համար գրեթե անմիջապես ակնհայտ կդառնա այստեղ տեղադրված ուսումնասիրությունների, վերլուծությունների ու զեկույցների միակողմանիությունը: Ներկայացնելով բացառապես կրոնական փոքրամասնությունների շահերը՝ այստեղ ներառված չեք գտնի այն բազմաթիվ օրինախախտումները, որ արձանագրվում են «մեծամասնության» հանդեպ: Սակայն ո՛չ ՀՀ Կառավարության աշխատակազմի՝ ազգային փոքրամասնությունների եւ կրոնի վարչությունը, ո՛չ էլ որեւէ այլ կառույց չի կարող որեւէ կերպ համակարգել այս համասփյուռ կայքի գործունեությունը: «Այսպիսի զեկույցներ՝ այլընտրանքային մտածողության տեր անձանց կամ մարդու իրավունքները յուրովի պաշտպանող կազմակերպությունների տեսակետների ժողովածուներ, պատրաստվել են նաեւ նախորդ տարիներին: Այս աշխատանքներում ընդգրկվածներից ոմանք առավել հավասարակշիռ են մոտենում խնդրին՝ փորձելով ծայրահեղության մեջ չընկնել: Առավել հաճախ մենք տեսնում ենք, որ զեկույց պատրաստողներն իրենց առաջ խնդիր չեն դրել հավասարակշռությունը պահել՝ խելահեղորեն տրվել են մարդու իրավունքների պաշտպանության գաղափարին, եւ ամեն առիթ՝ կրոնական որեւէ կազմակերպության հիմնավոր կամ անհիմն բողոք օգտագործել են մարդու իրավունքների խախտում ձեւակերպելու համար,- նշեց Վ. Ասցատրյանը,- մեր բացահայտած իրավիճակներից մեկն էլ Հելսինկյան իրավապաշտպան կազմակերպության զեկույցի հետ էր կապված, երբ փաստեցինք, որ այդ կազմակերպությունը, սնվելով Սայենթոլոգիայի Եկեղեցուց, պաշտպանում է նրա շահերը: Եվ, բնականաբար, մտքերի այդ ժողովածուն չի կարող արտահայտել իրական վիճակը»:

*Շարունակությունը՝ էջ 6*

# Ատոմ Յարճանյան (Սիամանթո)

*Սկիզբը՝ էջ 4*

Հրդեհվել են ցորենի արտերը, որոնց միջով հալածված նախիրներ են անցնում: Փողոցներում ընկած են մորթված մարդկանց դիակներ, մարդկային ամբոխներն են փախչում հերթական սրածությունից, հրդեհում են ազնվական քաղաքները, ձյունն իջնում է մարմարի ծանրությամբ: Սայլերը դիակներով են բեռնված, իսկ սգավոր մարդկանց աղոթքներն արյունոտ են, որովհետեւ նրանց հարազատներն ընդհանուր գերեզմաններում են: Դիակներով են բեռնված նավերը, ծովի ալիքները տատանում են մարդկային մարմնի մորթոտված մասեր: Ծովի ալիքներն իրենց հերթին են գոչում՝ *«Կոտորա՜ծ, կոտորա՜ծ, կոտորա՜ծ»*, զարհուրած շներն իրենց հերթին են մահաձայն ոռնում՝ *«Կոտորա՜ծ, կոտորա՜ծ, կոտորա՜ծ...»*:

Համատարած կոտորածի մեջ, սարսափից չխենթանալու համար, բանաստեղծն անկարելին է պահանջում մնացածներից. *« Օ՜, պատուհանները փակեցեք ու աչքերնիդ ալ...»*:

Հայ միջնադարյան գրականությունը լի է պատմական ողբերով: Հայ բանաստեղծները չէին ծնվել ողբասացության համար. ժողովրդի պատմական ճակատագիրն էր մշտապես կենդանի պահում ողբը (լալիքը), իսկ նրա բանաստեղծն էլ ակամա դառնում էր ողբասաց: 20-րդ դարասկզբին գրական այդ տեսակը նորից նորոգվեց՝ կապված ժողովրդի նոր փորձությունների հետ: Յարճանյանը գրեց իր «Մահվան տեսիլք» եւ այս բնույթի շատ այլ բանաստեղծություններ, Հ. Թումանյանը արցունքներով գրեց իր «Հոգեհանգիստը», Ե. Չարենցը երկրի վերջին զոհը դառնալու գիտակցությամբ ծնունդ տվեց իր առաջին «Մահվան տեսիլին» (1920):



Սիամանթոյի ընտանիքը

Բանաստեղծությունը վերնագրված է «Մահվան տեսիլք»: Տեսիլ (տեսիլք) այստեղ նշանակում է պատկեր, տեսարան, երեւակայական պատկերացում, մինչեւիսկ՝ ցնորական (ոչ իրական) խաբուսիկ պատկեր՝ երեւույթ: Տեսիլը հայ միջնադարյան բանաստեղծության տեսակ է, որ, ահա, վերամարմնավորվում է Յարճանյանի ստեղծագործության մեջ: Տեսիլի բոլոր բացատրություններն էլ ճիշտ են, որովհետեւ լրացնում են իրար: Այս քերթվածը ոչ միայն տեսարան է ու պատկեր, այլեւ արյունոտ իրականությունից սնված երեւակայական պատկերացում, անգամ՝ իրականությունը վերակրկնող, բայց եղեռնի անհեթեթության անըմբռնողության պատճառով՝ անիրական թվացող ցնորք: Հայոց ցեղասպանության իրական պատկերն այնքան զարհուրելի էր, անպատմելի, որ վերածվել էր տեսիլքի, նաեւ՝ մղձավանջային զառանցանքի:

Նույն պատկերն է նաեւ «Չարչարանքի երազ» քերթվածի մեջ: «Գարնան ու կոտորումների իրիկուն» ահազանգին հաջորդում է բանաստեղծի միջամտությունը. *«Հոգիս վրեժի շատրվան մըն է նորեն կատաղորեն դեպի վեր»*: Անդունդներից, երկրի խորքից «սրածումներու ձայն» է լսում, եւ այդ ձայնը նորից նրան պարուրում է մահվան ցնորքով.

*Ու նորեն այս գիշեր*
*Տաճարներուն մեջ անմեղներու*
*դիակներ անհամար.*
*Ու տանիքիս վրա*
*տեղատարափ մը երկաթյա,*
*Հրդեհներու մրրիկ մը*
*ցանցիս տակ,*
*Ու տեղափոխվող ջուրերուն*
*վրան*
*Խաչված նահատակներ*
*կ'երեւան...*
*... Օ՜, օգնության եկե՛ք,*
*գլխատված մարմիններ զիս*
*կ'արշավեն...*

Հաջորդում են նույն ապրումներով գրված «Հոգեվարքի իրիկուն», «Աղոթք», «Հանգիստի իրիկուն», «Գիշեր մը» քերթվածները: Գիշերը սոսկ «ավերումի գիշե՜ր», վախի ու սարսափի գիշեր է, որովհետեւ «Հեռուներեն մահազանգակի ցնորաբեր ձա՜յն» է լսվում: Այս ամբողջ ցավը, ողբը, ցասումը, վրեժը կուտակվում են բանաստեղծի էության մեջ եւ ծնունդ տալիս «Հոգիս» լայնահուն բանաստեղծությանը, որի մեջ հոգին է դառնում բառ-խորհրդանշան եւ իր իմաստուն պատկերների հաջորդականությամբ ստեղծում-ամբողջացնում հեղինակի մենախոսությունը: Ժողովրդի ցավից հոգին կարող է ե՛ւ քարանալ, ե՛ւ ողբալ, իսկ որ այս բանաստեղծության մեջ առաջնային է՝ կարեկից լինել, կողքին լինել եւ հույսի ճանապարհը չկորցնել: Ահա այդ բանաստեղծությունը.

*Ահավասի՛կ հոգիիս ջահերը,*
*որ վայրկյան առ վայրկյան*
*Մտածումս կ'արեգակեն՝*
*զանիկա խավարին մեջ*
*ուզելէ հետո...*
*Հոգիս ա՛ն է, որ բյուրավոր*
*անգամ ձեր ամենուն ցավն*
*ապրեցավ,*
*Ա՛ն է, որ անդունդի մը մեջ՝*
*իր մոխրին վրա ծնրադիր՝*
*Հարազատ ու շղթայապատ*
*քույրերու աքսորը կուլա...*
*Հոգիս այն վա՛յրն է, ուրկե*
*արյունոռուշտ լուսին մը*
*բարձրացավ*
*Անմեղներու կոտորածեն*
*ծովացյալ դաշտի մը վրա...*
*Ու ա՛յն հողմակոծ անտառն է,*
*որուն ավազաններուն շուրջ՝*
*Օ՜, եղբայրական արյունի*
*հեղեղներ կը հոսին...*
*Հոգիս այն երկիրն է, ուր որբ եւ*
*սեւահեր տղաներու*
*բազմություններ,*
*Անարդար սուրերու*
*շողյուններեն հալածական,*
*Աղեխարշ ճիչերով*
*փլատակներու մեջեն*
*կը փախչին...*
*Հոգիս այն երկինքն է, ուրկե*
*հույսին բոլոր աստղերը*
*թափեցան,*
*Ու այն մարմարակերտ*
*տաճարն, ուր կյանքը ծունկի եկած՝*
*Խելահեղորեն Ամենազոր*
*մահը կը պաղատի...*
*Հոգիս Ավետարան մըն է, որուն*
*վրա տժգույն ու հուսահատ ձեռքեր*
*Անկարելի քավության մը*
*համար, ապարդյունորեն,*
*դեղին թերթեր կը թղթատեն:*
*Հոգիիս մեջ երբեմն*
*արշալույսներ կ'արյունին,*
*Եվ պաղատող աղաղակներու*
*անասելի համանվագ մը*
*կ'որոտա.*

*Շարունակությունը՝ էջ 7*

# Կրոնները Հայաստանում

*Սկիզբը՝ էջ 5*

Անցած քսան տարիների ընթացքում, ինչպես կյանքի մյուս ոլորտները, զարգացում է ապրել նաեւ կրոնական ոլորտը, այս ընթացքում թվաքանակով աճել են կրոնական կազմակերպությունները, ընդլայնել եւ խորացրել են իրենց գործունեության ոլորտները: Մատուցում են սոցիալական տարբեր ծառայություններ, արմատներ են ձգում կրթական եւ դաստիարակության ոլորտում՝ մասնավոր դպրոցներից մինչեւ ամառային ճամբարների կազմակերպում (այս հարցը եւս առկախ է. չկա այս ոլորտը կարգավորող իրավական ակտ), մանուկներին բաժանում են «նվերներ»՝ նկարազարդ քարոզչական գրականություն: Օրենքն այնքան է հնացել, որ առաջացել են շատ հարցեր, որ դուրս են օրենքի շրջանակներից: Խնդիրների դեպքում սովորաբար համարում են, որ համապատասխան լծակը չկա, իսկ մարդու իրավունքները գերակա են, ազատ ճանապարհ են տալիս կրոնական փոքրամասնություններին՝ մտահոգվելով, որ այլ դեպքում Արեւմուտքը կարձագանքի բացասական: Իհարկե, այս ազատ ճանապարհը կարող էր դրական ավարտ ունենալ, եթե իրավունքները միայն բարի նպատակներով իրացվեին: Սակայն ինչպես մարդու գործունեության ցանկացած ոլորտ, այստեղ եւս այն կա՛մ ի սկզբանե լինում է, կա՛մ ընթացքում դառնում է շահադիտական: Հայաստանում առկա են նման իրավիճակների մի շարք օրինակներ: Անցյալ տարվա մամուլի վերլուծությունը, իրոք, ցույց է տալիս, որ կա մարդու իրավունքների ոտնահարում՝ մարդու իրավունքների պաշտպանության դիրքերից, կամ մի իրավունքի պաշտպանության անունից մարդու մի շարք այլ իրավունքների ոտնահարում:

Վ. Ասցատրյանը համոզված է, որ հարկ է ընդունել նորովի շարադրված օրենք, քանի որ հինն իր կառուցվածքով, ենթաբաժիններով այսօր ընդունվող մեր մյուս օրենքներին համապատասխան չէ: «Այստեղ պետք է հստակ սահմանել, որ Հայ Առաքելական Եկեղեցին ոչ միայն պատմականորեն, այլեւ հայ ժողովրդի այսօրվա կյանքում ունի առանձնահատուկ ազգապահպան դեր, իսկ կրոնների մեջ՝ առանձին կարգավիճակ: Կարգավիճակների այս տարբերակումն առկա է գրեթե եվրոպական բոլոր երկրներում, եւ այն չի դիտվում որպես իրավունքների ոտնահարում»,- փաստեց նա՝ բացատրելով, որ այս երեւույթն առկա է կյանքի նաեւ մյուս բնագավառներում. ասենք, ընտրություններում հավասար իրավունքներով պայքարում են բոլոր ցանկացողները, սակայն մեծամասնության ընտրությամբ նրանցից միայն մեկին է տրվում իշխանական իրավունք: Սրանից բացի, հարկ է տարբերակել նաեւ մյուսների կարգավիճակները. ազգային փոքրամասնությունների ավանդական կրոնական կառույցները դիտարկել առանձին՝ տալով իրենց համայնքի ներսում նաեւ մշակույթի, ազգային ինքնության պահպանության գործառույթ իրականացնելու հնարավորություն: Առանձին դասել այն կազմակերպությունները, որ հասարակության մեջ հայտնի են դարձել իրենց օրինապահությամբ՝ որպես բարեխիղճ հարկատու, իրենց իրական բարեգործությամբ: Այսպես, վերջապես, փոխել «կրոնական կազմակերպություն» ընդհանուր սահմանումը, տալ չափելի սահմանումներ, որով էլ առավել դյուրին կլինի դրանցից յուրաքանչյուրի համար մշակել իրավունքների եւ պարտականությունների շրջանակ: Այսօր, օրինակ, բոլոր կրոնական կազմակերպություններին իրավունք է տրված այցելել բանտեր, հիվանդանոցներ, ծերանոցներ: Մինչդեռ, պարզ է, որ հարկ է այդ իրավունքը տալ նրանց, ովքեր այդ հաստատություններում հետեւորդներ ունեն եւ կամենում են այցելել կամ ինչ-որ արարողություններ կատարել տեղում:

Եվ, վերջապես, սահմանելով կրոնական կազմակերպությունների պարտականությունները՝ առավել որոշակի կդառնա նրա գործունեության շրջանակը: Կրոնի գործերով պետական մարմինն այսօր չունի գործունեության համար անհրաժեշտ՝ վերահսկողություն իրականացնելու լիազորություն, իրավախախտումները կանխելու, արձանագրելու, զգուշացումներ ներկայացնելու եւ դրանք անտեսելու դեպքում դատական գործընթաց սկսելու հնարավորություններ: Եթե կա օրինախախտության դեպք, պետական մարմինը, առավելագույնը, նյութերը կարող է ուղարկել դատարան: Իսկ դատարան դիմելու լիազորությունը, իրոք, անիմաստության աստիճան քիչ է, քանի որ կրոնական կազմակերպությունների գործունեությունը կարգավորող միակ պետական կառույցը (իր երեք աշխատակցով) չունի հետաքննություն իրականացնելու, դեպքը՝ սպանություն, ինքնասպանություն, մարդու ազատության սահմանափակում, կրոնական տեսանկյունից որակելու համար փաստեր հավաքելու որեւէ հնարավորություն: Փոխանցելով տեղեկությունը՝ նրա գործն ավարտվում է. հետաքննությունն անցկացնում են համապատասխան՝ ոստիկանության կամ ազգային անվտանգության մարմինները: «Հարկ է իրավասու լինել՝ որոշակի գործողություններով կանխել այն իրավիճակի ստեղծումը, որն առաջ է բերում իրավախախտումը»,- նշեց Վ. Ասցատրյանը:

Ամփոփելով փաստենք, որ խուսափելով Եվրոպայի հետ քաղաքական նոր խնդիրներից՝ երկար ժամանակ հետաձգվել է եւ դեռ հետաձգվում է այս ոլորտին անդրադարձը: Բայց այսպես երկար շարունակվել չի կարող: Օրենսդրական բացերի պատճառով շարունակվում են ոտնահարվել մարդու իրավունքները, Հայաստանի Հանրապետությունում ճնշող մեծամասնություն կազմող Հայ Առաքելական Եկեղեցու հետեւորդների իրավունքները, մեր ազգային արժեքները, շարունակվում է վտանգվել հայ ընտանիքը: Եվ քանի որ ընթանում ենք դեպի Եվրոպա, ուսանելի կլինի հիշել նաեւ Եվրոպայի փորձը: Չէ՞ որ 70-ական թվականներին, երբ եվրոպական հասարակությունն անշրջանցելի կրոնական իրավախախտումներին կտրուկ արձագանքեց, դրանով ստիպեց իշխանություններին անդրադառնալ եւ որոշակիորեն համակարգել այս ոլորտը: Այսպես տեղի ունեցան օրենքների լուրջ փոփոխություններ, պետական կառուցվածքում նոր միավորների ստեղծում՝ ընդհուպ մինչեւ «սեւ ցուցակների» պատրաստում, տարբեր կիրառական մեխանիզմների մշակում եւ այլն: Այնպես որ այսօր միայն համապատասխան վարչության ներկայացրած օրենսդրական փաթեթը բավարար չէ խնդրի լուծման համար: Այդ փաթեթն ինչպես երկու տարի է՝ օրենսդրի դարակում է, այնպես կարող է եւս մի երկու տասնյակ տարի մնալ այնտեղ: Մեր հասարակությունը պիտի անտարբեր չլինի, պիտի արձագանքի, բարձրաձայնի, փորձի պաշտպանել թե՛ իր, թե՛ իր համար տեսանելի զոհերի շահերը, ցույց տա, որ հասունացել են խնդիրները, ու ինքն էլ ցանկանում է տեսնել դրանց լուծումները: Սիրելի՛ մեծամասնություն, փոքրամասնության շահերի ակտիվ պաշտպանության ստվերում շուրջ քսան տարի է, ինչ անտեսվում են քո շահերը: Թերեւս բավ է:



**Կարմեն ՄԱՐՏԻՐՈՍՅԱՆ**

**Սբ Հովհան ՈՍԿԵԲԵՐԱՆ**

# ՄԱՏԹԵՈՍԻ ԱՎԵՏԱՐԱՆԻ ՄԵԿՆՈՒԹՅՈՒՆԻՑ

## (մեկնություն Երանիների)

*Սկիզբը՝ թիվ 13-15*

Այստեղ ասում է, թե՝ «Մեծ է ձեր վարձքը երկնքում»: Իսկ Ղուկասը նրանց է մատուցում Քրիստոսի մեծ մխիթարությունը: Քանզի ոչ միայն երանելի է համարում նրանց, ում բամբասում են Աստծո պատճառով, այլ նաեւ եղկելի է համարում նրանց, ովքեր իրենց մասին բոլորից բարի բաներ են լսում. «Վա՛յ ձեզ, ասում է, երբ բոլոր մարդիկ բարի բաներ ասեն ձեր մասին»: Անգամ առաքյալների մասին են ոմանք, եւ ոչ բոլորը, բարի բաներ խոսում: Դրա համար էլ ոչ թե ասաց, թե՝ եթե մարդիկ, այլ թե՝ բոլոր մարդիկ ձեր մասին բարի խոսեն: Քանզի անհնարին է, որ բոլոր մարդկանցից բարի բաներ լսեն առաքինությամբ ապրողները:

Դարձյալ ասում է. «Եթե ձեր մասին չար անուն հանեն, ուրախացեք ու ցնծացեք»: Քանզի մեծ հատուցումներ են սահմանված ոչ միայն ճգնություններին, այլ նաեւ բամբասանքներին համբերելու համար: Ուստիեւ չի ասում, թե՝ եթե ձեզ հալածեն ու սպանեն, այլ թե՝ «Երբ ձեզ նախատեն եւ ձեր մասին ամեն տեսակի չար բան ասեն»: Քանզի դժնդակ բամբասանքներն առավել չար են, քան գործերը. որովհետեւ ճգնությունների ցավերն սփոփում է շատ բան՝ բազմության խրախույսը, մտերիմների հարգանքը, պսակներ են մատուցում նրան եւ պատմում են, թե անվանի են, բայց չարախոսությանը մխիթարություն չկա, եւ չի երեւում, թե մեծ արդարություն է այն, եւ պատերազմողին ճգնություններից առավել է կսկծեցնում, եւ շատերը, աղետներին չդիմանալով, մտաբերում են խեղդվելու մասին:

Ինչո՞ւ ես զարմանում սրա վրա. մատնիչին՝ պիղծ, անամոթ եւ բոլորի առջեւ ակնկոր, այսպիսի ամոթալի գործերը կախաղանի են բերում: Յոբը, ով ադամանդի պես ամուր եւ ժայռից առավել հաստատուն էր, երբ զրկվեց իր ողջ ունեցվածքից, անտանելի կտտանքների ենթարկվեց, հանկարծակի անորդի ու անժառանգ մնաց, իր մարմնից խլրտալով որդերի աղբյուր ելավ, եւ իր դեմ ելած տեսավ նաեւ իր կնոջը, ամեն բան դյուրությամբ քերեց հեռացրեց իրենից միաժամանակ: Բայց երբ տեսավ իր բարեկամներին, որ նախատում էին եւ իր մասին չարաչար կարծիքներ հայտնում, թե պատիժների է մատնվել իր մեղքերի համար, այն նախատակը՝



մեծ ու առաքինի այրը, խռովվեց ու զայրացավ:

Դավիթը նույնպես, թողնելով իր բոլոր վշտերը, Աստծուն խնդրում էր իրեն բամբասողներից վրեժ առնել. «Թո՛ղ տուր, ասում է, նրան, որ անիծի, որովհետեւ Տերն այդպես հրամայեց, որպեսզի տեսնի իմ վիշտը եւ ինձ բարիք հատուցի դրա անեծքի դիմաց»: Իսկ Պողոսը պատվում է ոչ միայն ճգնողներին ու չարչարվողներին, այլ նաեւ բամբասվողներին. «Հիշե՛ք, ասում է, առաջին օրերը, երբ համբերեցիք բազում ճգնությունների, նախատինքների ու նեղությունների»: Այդ ամենի համար Քրիստոսը մեծ վարձ ստացավ:

Բայց որպեսզի ոչ ոք չասի, թե՝ Դու, որ այստեղ վրեժ չես լուծում եւ չես փակում դրանց բերանները, այնտեղ վա՞րձ կտաս, մեջ է բերում մարգարեներին, որպեսզի ցույց տա, թե Աստված նրանց համար նույնպես վրեժ չլուծեց: Եթե այնժամ, երբ անմիջապես ելնում էին՝ վրեժխնդրություն հատուցելու, կրթում էր հանդերձյալ [բարիքներով], ապա որքա՜ն առավել այժմ, երբ ավելի պարզ ու հայտնի դարձավ հույսը, եւ մեծ ու առավել՝ զգաստությունը: Եվ տե՛ս, թե որպիսի պատվիրան է դնում սրա դիմաց. ցույց է տալիս, թե այլ կերպ անհնարին է, որ հարկ է, որ նախ ամեն բանով պատրաստված լինի, հետո միայն ելնի նահատակության: Ուստիեւ նախ պատրաստում է պատվիրանների ճանապարհը առաջինից դեպի հաջորդները եւ իբրեւ ոսկե շղթա՝ տող առ տող բերում է պատվիրանները. եթե մեկը խոնարհ է, ապա պարզ է, որ սգում է իր մեղքերի համար: Ով [իր մեղքերի համար] սգացող է ու հեզ, պարզ է, որ արդար է եւ ողորմած: Ով ողորմած է եւ արդար, պարզ է, որ սրտով մտախոհ ու սուրբ է: Պատշաճ է, որ այդպիսին նաեւ խաղաղարար լինի: Իսկ նա, ով ցույց է տալիս իր մեջ եղած բոլոր արդարությունները, այդպիսին պատրաստ է ճգնությունների եւ ամենեւին չի խռովվում իր մասին բամբասանքներ լսելիս, չի վախենում, երբ բյուրավոր չարչարանքներ է կրում:

Արդ, երբ խրատեց նրանց պատշաճ խրատներով, հանգստացրեց նրանց հարգանքով ու գովությամբ: Քանզի բարձր էին հրամաններն ու հնից շատ ավելի մեծ, որպեսզի չխռովվեն եւ չասեն, թե ինչպես կարող են այդպիսի առաքինություններ ցույց տալ իրենց մեջ, լսի՛ր, թե ինչ է ասում. «Դուք եք երկրի աղը»: Որպեսզի ցույց տա, որ ոչ թե մեկ ազգի մոտ պիտի ուղարկի նրանց, ինչպես մարգարեներին, այլ երկու, տասը կամ քսան քաղաք, բոլոր երկրները, ծովերն ու ամբողջ աշխարհը, որոնք ամբողջովին չարիքի մեջ էին: «Դուք եք երկրի աղը» ասելով՝ նաեւ ցույց տվեց, թե մարդկային բնությունն ամբողջովին անհամացել ու փտել էր մեղքերի հարվածներից: Այդ պատճառով էլ նրանցից այսպիսի առաքինություններ է խնդրում, որպեսզի պիտանի լինեն դարման լինելու բոլորին: Քանզի հեզը, խոնարհը, ողորմածն ու արդարը ոչ միայն իր անձը կկորզի դեպի առաքինությունները, այլ նաեւ բազմությունների համար կպեղի գեղեցիկ աղբյուր՝ բխելու մաքուր ջուր, երբ սրտով սուրբ, խաղաղարար եւ ճշմարտության համար հալածվող մարդը իր վարքը ուղղի՝ ընդհանուրի օգուտի համար:

Եվ արդ, նրանք ինչպե՞ս կհամեմեն նեխածությունները. անհնարին է այդ, քանզի անհնարին է, որ աղն օգնի նեխածին: Այլ նրանք (առաքյալները) աղում եւ պինդ պահում էին նրանց, ում նախ նորոգում, մաքրում էին վատ հոտից: Մեղքերի փտածությունից նորոգում էին Քրիստոսի ուղղությունները, իսկ նրանց գործն այն էր, որ ջանքեր թափեն ու տառապեն, որ նրանք նույնին չդառնան:

Տեսնո՞ւմ ես, թե ինչպես է քայլ առ քայլ մարգարեներից առավել ազնիվ ցույց տալիս նրանց, որոնք ոչ միայն պաղեստինցիների երկրում էին վարդապետներ լինելու, այլ ողջ աշխարհում, եւ ոչ թե զուր, այլ ահարկու վարդապետներ: Եվ զարմանալին այն էր, որ ո՛չ խնդրում էին որեւէ մեկին, ո՛չ հպատակվում էին որեւէ մեկի, այլ կսկծեցնում էին, ինչպես աղը, եւ ցանկալի էին լինում բոլորին: Եվ մի՛ զարմացեք, որ բոլորին թողած՝ միայն ձեզ հետ եմ խոսում եւ ձգում տանում եմ դեպի մեծագույն ճգնությունները, այլ զարմացեք նրա վրա, թե որքան քաղաքների, ժողովուրդների եւ ազգերի մեջ եմ առաքելու ձեզ՝ լինելու վերակացուներ: Եվ ոչ միայն կամենում եմ, որ իմաստուն լինեք, այլ որ նաեւ շատերին իմաստուններ դարձնեք: Քանզի հույժ պետք է, որ իմաստուն լինեն նրանք, ումից կախված է մյուսների փրկությունը:

*Շարունակելի*

***Գրաբարից փոխադրեց***
***Մարթա ԱՐԱԲՅԱՆԸ***

# ԱՏՈՄ ՅԱՐՃԱՆՅԱՆ
## (ՍԻԱՄԱՆԹՈ)

*Սկիզբը՝ էջ 6*

*Հոն սրածումներու աշխարհ մը*
*կա, ուր սարսափահար կյանքեր*
*Ձեր շարժումին, ձեր*
*օգնության, ձեր ձայնին*
*կ'սպասեն...*
*Հոգիիս մեջ հերոսներու ծնունդ*
*մը կա, եւ մեռելներու թափոր*
*մը միանգամայն...*
*Հոգիս այսօր անձրեւ մըն է*
*մորթազերծված դիակներու*
*վրա,*
*Ու նայվածք մըն է, որ բոլոր*
*անտիրական դագաղները կը*
*թափանցե,*
*Հոգիս բարկության ու ցասումի*
*ծով մըն է այս գիշեր,*
*Որուն վազքին տակ*
*արյունարբու ռազմագունդերը*
*պիտի նահանջեն...*
*Ու բոլոր գերեզմանոցները,*
*իրենց խորերեն, ահագնաբար,*
*Ձեր նայվածքներուն առջե՛ւ*
*դեպի վե՛ր պիտի շրջին...*
*Որպեսզի վերջապես*
*ճանչնանք, ո՛վ անկարեկից*
*ներկաներ,*
*Այն բոլոր մարտիրոսները,*
*որ ձեր բոլորին համար*
*Անձնվիրության եւ կամքի*
*առավոտ մը ինկան...*
*Հոգիս մահատեսիլ աշուն*
*մըն է, որ այս ամենուն վրա*
*Իր մշուշը եւ իր տերեւներուն*
*հոգեվարքը կը սրսկե,*
*Բայց հոգիս եւ Կարմիր*
*Հուսահատ մըն է, որ անընկճե-*
*լի Հույսին համար*
*Առաքյալի մը պես դեպի*
*արգասաբեր մահը պիտի թեւե...*

Սա Յարճանյանի համեմատաբար կարճ բանաստեղծություններից մեկն է (35 տող), որն ամբողջությամբ հագեցած է հայոց ողբերգության արծարծումներով եւ խոր ապրումներով: Ակնհայտ է բանաստեղծի սեւեռումը եւ նյութի ընդգրկումը:

Հոգու ջահերը, նախ, նրա մտածումն են արեգակում, այսինքն՝ բռնկում հրեղեն լույսով: Եվ սկսվում է պատկերների թվարկումը՝ ամեն անգամ նորովի բացահայտելու, թե ինչ է իր հոգին: Հոգին վերափոխվում է եւ, ըստ ցավի դրվագների, մարմնավորվում նորովի: Հոգին ե՛ւ բոլորի ցավն է ապրում, ե՛ւ նրանց համար լալիս, դառնում է վայր, որտեղից ժողովրդի արյունով հագեցած լուսինն է բարձրանում, դառնում է անտառ, որի կողքով արյան հեղեղներ են հոսում: Հոգին այն երկիրն է, այսինքն՝ Հայաստանը, որտեղից որբ տղաների բազմություններ են փախչում, հույսերի առկայծող աստղերից թափված երկինք է, տաճար է, ուր կյանքն անգամ մահ է տենչում: Հոգին Ավետարան է, որի քարոզած արդարությունն ու գութն անիմաստ են վայրենի կյանքի համար, այդ իսկ պատճառով հոգու մեջ արշալույսներն արյունոտվում են: Հոգին կյանքի ասպարեզ է՝ հերոսներով եւ մահվան թափորներով: Հոգին անձրեւ է հանգուցյալների վրա, նայվածք է՝ ուղղված նրանց, բարկություն է ու ցասում, մահատեսիլ աշուն է, բայց նաեւ՝ *«Կարմիր Հուսահատ»*, այսինքն՝ իր ժողովրդի արյան վրեժի եւ *«անընկճելի Հույսի համար»* առաքյալի պես պատրաստ *«արգասաբեր»* մահվան, այսինքն՝ հերոսացման: Հեղինակին առաջնորդում է գաղափարական հավատացյալի կերպարը, որն էլ նրա համար դառնում է հույսի ու փրկության ճանապարհի ուղենիշ: Այսինքն՝ վերստին նրա հայացքն ուղղվում է դյուցազնական Հայորդուն:

Հաջորդում են մեկը մյուսից ծանր տեսարաններ, որոնք կարելի էր շրջանցել, եթե դրանք չլինեին իրական կյանքի անդրադարձը: Բանաստեղծը ոչ թե իր մտապատրանքն է ներկայացնում որպես բանաստեղծություն, այլ իրականությունն է վերակերտում բանաստեղծության: Իսկ դա նշանակում է, որ յուրաքանչյուր բանաստեղծություն գեղարվեստական ձեւ ստացած մի իրական վավերագիր է հայ ժողովրդի կանխամտածված ցեղասպանության ճանապարհին: Այս տեսակետից անհրաժեշտ է առանձնացնել «Ավերումի գիշեր», «Հիշատակ», «Անդրշիրիմյան աղաղակ», «Թաղում», «Մահերգ», «Արյուն է, որ կտեսնեմ», «Մեռնելոցի օր», «Ափ մը մոխիր, հայրենի տուն», «Քնարիս լարերը դեռ թաց են», «Ես երգելով կուզիմ մեռնիլ», «Ասպետին երգը» քերթվածները: *«Արցունքո՛վ, արցունքո՛վ լսեցի, որ ավերակ առ ավերակ // Քու լայնանիստ պատերդ իրարու վրա կործանեցին...»*,- ասում է նա Եփրատի ափին գտնվող հայրենի տանը, նորոգում մանկության հիշատակները եւ խոսքն ավարտում այս լարված տողերով.



*Ափ մը մոխի՛ր աճյունիս հետ,*
*Հայրենի՛ տուն,*
*Ափ մը մոխի՛ր քո մոխիրեդ*
*ո՛վ պիտ բերե,*
*Ափ մը մոխի՛ր քու ցավե՛դ,*
*քու անցյալե՛դ,*
*Ափ մը մոխիր... իմ սրտիս*
*վրան ցանելու...*

*Շարունակելի*

***Դավիթ ԳԱՍՊԱՐՅԱՆ***
***Բանասիրական գիտ. դոկտոր, պրոֆեսոր***

# ՕՍՄԱՆՅԱՆ ԿԱՅՍՐՈՒԹՅԱՆ ԵՎ ՍԵՖՅԱՆ ՏԵՐՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱՎՈՐՈՒՄՆ ՈՒ ՀԶՈՐԱՑՈՒՄԸ

## ՀԱՅԱՍՏԱՆԸ 15-17-ՐԴ ԴԱՐԵՐՈՒՄ



*Սկիզբը՝ թիվ 15-16*

**գ) Թուրք-պարսկական երրորդ պատերազմը եւ Հայաստանը:** 1602 թ. սկսվում է թուրք-պարսկական՝ արդեն երրորդ պատերազմը, որը, ի տարբերություն նախորդ երկու պատերազմների, սկսում են պարսիկները: Պատճառն այն էր, որ պարսից շահ Աբաս Ա-ն (1587-1628) ցանկանում էր վերադարձնել իր իսկ կողմից Օսմանյան կայսրությանը զիջած տարածքները: Բանն այն էր, որ շահ Աբասը կարողացել էր ընդամենը մեկ տասնամյակի ընթացքում կատարել ռազմական եւ տնտեսական վերափոխումներ, որոնց արդյունքում ստեղծել էր հզոր ու մարտունակ բանակ եւ տնտեսապես ամուր պետություն: Փաստորեն, պարսից շահն այնպես էր վերակառուցել իր երկիրը, որ Պարսկաստանը պատրաստ էր նոր՝ անգամ հաղթական պատերազմի:

Պատերազմից առաջ ստեղծվել էին նաեւ արտաքին նպաստավոր պայմաններ: 1590-ական թթ. Փոքր Ասիայում բորբոքվել էր «ջալալիների» ապստամբությունը, եւ Օսմանյան կայսրությունն զբաղված էր այն ճնշելու գործով: Փոքրինչ պարսկամետ դիրքորոշում էին որդեգրել օսմանյան լծից դժգոհ հայերն ու վրացիները: Պարսիկներին էին աջակցում նաեւ եվրոպական երկրները, որոնք վախեցած էին Օսմանյան կայսրության՝ Եվրոպայում ավելի ու ավելի ընդարձակվելու վտանգից: Չմոռանանք, որ հենց եվրոպացի մասնագետների (անգլիացի Էնթոն եւ Ռոբերտ Շերլի եղբայրներ) աջակցությամբ պարսիկները կարողացան վերակազմավորել եւ վերազինել իրենց բանակը: Հատկապես նորամուծություն էր հզոր թնդանոթների կիրառությունը պարսկական բանակում, մինչդեռ դրանք օսմանյան բանակի կարեւոր մասերից մեկն էին կազմում դեռեւս 15-րդ դ. առաջին կեսից սկսած:

Այսպիսով՝ հաշվի առնելով ներքին ու արտաքին բոլոր նպաստավոր պայմանները՝ պարսից շահ Աբասը 1602 թ. ռազմական գործողություններ սկսեց Օսմանյան կայսրության դեմ: Բավականին կարճ ժամանակամիջոցում պարսիկները գրավեցին Ատրպատականի եւ Արեւելյան Հայաստանի՝ ռազմաստրատեգիական եւ առեւտրատնտեսական տեսանկյունից կարեւորագույն կետերը՝ Թավրիզը, Ջուղան, Նախիջեւանը, Երեւանը, սակայն թուրքական հակահարձակումն ստիպում է պարսիկներին նահանջել մինչեւ Թավրիզ:

Վերականգնելով իր բանակի մարտունակությունը՝ պարսից շահ Աբասը 1604-1607 թթ. վերագրավում է Արեւելյան Հայաստանը, Արեւելյան Վրաստանը, Հյուսիսային Իրաքը եւ Լուրիստանը: Հենց այս նվաճումներն էլ իրավականորեն ամրագրվում են 1612 թ. նոյեմբերի 20-ին Թավրիզում կնքված պայմանագրով:

Հայերիս համար այս պատերազմում հիշատակության է արժանի ոչ այնքան Արեւելյան Հայաստանի վերագրավումը պարսիկների կողմից, այլ պարսից շահ Աբասի կողմից կազմակերպված բռնագաղթը, որն իսկական արհավիրք դարձավ Արեւելյան Հայաստանի (Գանձակից մինչեւ Նախիջեւան ու Սեւանից մինչեւ Մակու), Հյուսիսարեւմտյան Ատրպատականի (Թավրիզից մինչեւ Ուրմիո լիճ) եւ մասամբ Արեւմտյան Հայաստանի (Մուշից ու Վանից մինչեւ Էրզրում) համար, քանի որ տեղի բնիկ էթնիկ տարրը բռնագաղթի է ենթարկվում հայրենի հողից:

Բռնագաղթի պատճառն այն էր, որ պարսից շահ Աբաս Ա-ն նպատակ ուներ հայ վաճառականների միջոցով ընդլայնել Պարսկաստանի արտաքին առեւտրական եւ քաղաքական կապերը, ինչպես նաեւ հայ արհեստավորների միջոցով զարգացնել երկրի հետամնաց տնտեսությունը: Նա հույս ուներ նաեւ մեծ հարված հասցնել Օսմանյան կայսրության մետաքսի առեւտրին՝ փոխարենը զարգացնելով մետաքսի սեփական առեւտուրը, որը Հայաստանի տարածքից տեղափոխվելու էր հարավ՝ ընդհուպ մինչեւ Պարսից ծոց: Փաստորեն, այս բռնագաղթի միջոցով պարսից շահը հեռահար նպատակներ էր հետապնդում՝ ցանկանալով միաժամանակ հզորացնել իր երկիրն ու թուլացնել թշնամուն:

Բռնագաղթի ենթարկվածների թիվը գերազանցում է 350 հազարը, որից միայն 150-200 հազարն է ողջ մնում բռնագաղթի երկարատեւ ու դաժան ճանապարհին անցնելուց հետո: Միայն Արաքս գետն անցնելիս դժվարություններից մահացել կամ խոշտանգումներով ոչնչացվել է շուրջ 100 հազար հայ:

Վերոնշյալ առեւտրաարհեստավորական հեռահար նպատակները հետապնդելով՝ շահ Աբաս Ա-ն Իրանի Սպահան քաղաքի մոտակայքում հիմնադրում է զուտ հայաբնակ Նոր Ջուղա ավանը, որտեղ վերաբնակեցվում են Նախիջեւանի Ջուղա քաղաքի հայերը:

Նոր Ջուղայի օրինակով ստեղծվեց նաեւ Ֆարրահաբադը Մազանդարանում՝ Կասպից ծովի հարավային ափին: Բռնագաղթեցված հայերին բնակեցրին Իրանի կենտրոնական՝ Ալնջան, Բուրվարի, Գյանդուման (Չհարմահալ), Լնջան, Խանմիրզա, Մալայեր, Միզդե, Ջղախոռ, Փերիա (Փարիա), Փլարդ, Քյարվանդ գավառներում: Հայերի քանակը շատացավ նաեւ Համադան, Շիրազ, Ռաշտ եւ այլ քաղաքներում:

Այսպիսով՝ թուրք-պարսկական հերթական պատերազմն իսկական արհավիրք է դառնում Հայաստանի համար՝ զրկելով նրան շուրջ 350 հազար տեղաբնիկից, այսինքն՝ հայից: Փոխարենը բավականաչափ ստվարացավ Պարսկաստանի հայ համայնքը:

**է) Թուրք-պարսկական պատերազմների հետագա ընթացքը եւ Հայաստանի վերջնական բաժանումն Օսմանյան կայսրության ու Սեֆյան Պարսկաստանի միջեւ:** 1612 թ. կնքված հաշտությունը շատ անկայուն էր, քանի որ Օսմանյան կայսրությունն ու Սեֆյան Պարսկաստանը չէին լուծել իրենց առջեւ դրված ռազմավարական նվաճողական պլանները, ուստի 1616 թ. ռազմական գործողությունները վերսկսվում են: Օգտագործելով Ղրիմի խանության զորքերի աջակցությունը՝ թուրքերը փորձեցին շատ արագ արդյունքի հասնել, սակայն նրանց պլանները ձախողվեցին՝ հանդիպելով պարսիկների համառ դիմադրությանը: Արդյունքում կողմերից եւ ոչ մեկը չհասավ իր նպատակին. 1618 թ. նրանց միջեւ կնքվեց հաշտության ժամանակավոր պայմանագիր:

1623 թ. արդեն պարսիկները վերսկսեցին պատերազմը՝ նվաճելով Արաբական Իրաքը: Շահ Աբասը թուրքերից գրավեց մի քանի խոշոր քաղաքներ՝ Բաղդադը, Նաջաֆը, Քերբելան, Ախալցխան եւն:

Ռազմական գործողությունների ընթացքը փոխվեց, երբ Աբաս Ա-ն մահացավ: Թուրքերը նախ գրավեցին Հյուսիսային Միջագետքը (Մոսուլ քաղաքով), Ախալցխան, Ախալքալաքը, Թավրիզը եւն, իսկ 1638 թ.՝ Բաղդադը:

Այսպիսով՝ պատերազմի հետագա ընթացքը չէր բխում պարսիկների շահերից, քանի որ նրանք տարածքային կորուստներ էին ունենում: Միեւնույն ժամանակ պատերազմի շարունակությունը չէր համապատասխանում նաեւ թուրքերի շահերին, քանի որ նրանք ռազմավարական նվաճողական պլաններ ունեին Եվրոպայում եւ բավականաչափ հյուծվել էին Պարսկաստանի դեմ շուրջ 125-ամյա պատերազմների հետեւանքով:

Փաստորեն, հաշտության պայմանագրի կնքումը բխում էր երկու տերությունների շահերից էլ, եւ պարսիկներն առաջարկում են թուրքերին հաշտություն կնքել, ինչին թուրքերը դրական պատասխան են տալիս:

Եվ ահա 1639 թ. մայիսի 17-ին Տիգրիս գետի ձախափնյա Դիալա վտակի ավազանում գտնվող Կասրե-Շիրին բնակավայրում կնքվում է 30-ամյա հաշտության պայմանագիր, որն ուժի մեջ է մնում մինչեւ 1720-ական թթ. թուրքական ներխուժումն Անդրկովկաս:



Պայմանագրի համաձայն՝ Արեւելյան Հայաստանը (առանց Կարսի), Արեւելյան Վրաստանը (Քարթլիի եւ Կախեթի թագավորություններ), Շիրվանը (մինչեւ Դերբենդ) եւ Ատրպատականն անցնում էին Իրանին, իսկ Հայաստանի մեծ մասը, Արեւելյան Վրաստանը (Իմերեթ, Մենգրելիա, Սվանեթիա, Գուրիա), Աբխազիան, Միջագետքը (այդ թվում Մոսուլը եւ Բաղդադը)՝ Օսմանյան կայսրությանը:

Թուրք-պարսկական սահմանն անցնում էր հյուսիսում Իմերեթի եւ Քարթլիի թագավորությունների միջեւ սահմանագծով, այնուհետեւ անցնում դեպի հարավ-արեւելք՝ Ախալցխան ու Ախալքալաքը թողնելով թուրքական, իսկ Փարվանա լիճը՝ պարսկական մասում: Իջնելով ուղիղ հարավ՝ սահմանն անցնում էր Ախուրյան գետի հունով եւ հասնում մինչեւ Արաքս գետի հետ միախառնման տեղը: Այնուհետեւ անցնելով Հայկական պար լեռնաշղթայով՝ սահմանը թեքվում էր դեպի արեւելք եւ Սիս ու Մասիս լեռներով հարավում հասնում մինչեւ Վասպուրականի լեռներ, որտեղից էլ շարունակվում էր դեպի հարավ՝ Միջագետքը թողնելով թուրքական կողմում:

Այսպիսով՝ Հայաստանը վերջնականապես բաժանվում է Օսմանյան կայսրության եւ Պարսկաստանի միջեւ: Թուրքերին անցած հայկական տարածքները (բացառությամբ Ախալքալաքի, Ախալցխայի, Աղբաքայի եւն) մինչ օրս էլ մնում են Թուրքիայի կազմում, իսկ Պարսկաստանին անցած տարածքների հյուսիսային մասը 1801-1828 թթ. նվաճվում է Ռուսական կայսրության կողմից, եւ հետագայում (1918 թ.) հենց այս տարածքների մեծ մասում էլ ստեղծվում Հայաստանի Հանրապետությունը՝ տարածքային հիմքը դառնալով ներկայիս ՀՀ համար:

*Շարունակելի*

*Միքայել ՄԱԼԽԱՍՅԱՆ*

## ՆՈՐ հրատարակություններ

**Լեւոն Մելիքսեթ-Բեկ. «Պատմաբանասիրական պրպտումներ»**

Ն. Ս. Օ. Տ. Տ. Գարեգին Բ Ծայրագույն Պատրիարք եւ Ամենայն Հայոց Կաթողիկոսի օրհնությամբ Մայր Աթոռ Սուրբ Էջմիածնի հրատարակչությունը լույս է ընծայել «Պատմաբանասիրական ուսումնասիրություններ» մատենաշարի Դ հատորը՝ պրոֆեսոր Լեւոն Մելիքսեթ-Բեկի «Պատմաբանասիրական պրպտումները»՝ աշխատասիրությամբ Պարույր Մուրադյանի: Բովանդակային առումով գիրքը բաժանված է երեք մասի՝ մատենագրական եւ մատենագիտական պրպտումներ, պատմություն եւ բանահյուսություն, վիմագիր վկայություններ:

Պրոֆ. Լեւոն Մելիքսեթ-Բեկը հայոց պատմության, մատենագրության ու մշակույթի անդադրում հետազոտող էր, ակադեմիկոս Նիկողայոս Մառի սահմանած «Հայ-վրացական բանասիրություն» գիտակարգի երեւելի ներկայացուցիչը: Գիտնականը «Արարատ» եւ «Էջմիածին» հանդեսների տեւական ու ցանկալի հեղինակներից էր՝ քաջատեղյակ Հայոց եկեղեցական պատմությանը:

Պրոֆեսորի ծննդյան 120-ամյակի տոնախմբման օրերին Ս. Էջմիածինը նրա հիշատակը հարգում է հայերեն հրատարակված աշխատությունների այս ընտրանու տպագրությամբ:

**Անահիս Պարսամյան. «Օծինդրի բույրը կամ Սուրբ Վահան Գողթնացի»**

Այս սրբախոսական վիպակը Մայր Աթոռի նախաձեռնած եւ իրականացվող սրբախոսական գրականության մատենաշարի երկրորդ գիրքն է: 733 թվականին նահատակված ս. Վահան Գողթնացու մասին սույն վիպակը հիմնված է Ը դարի սրբախոս, Արծկեի Երաշխավոր վանքի վանահայր Արտավազդի շարադրանքի հիման վրա (744 թ.):

**Նիկոլայ ավգ ֆոն. Ագաֆոնով. «Յուղաբեր կանայք»**

Այս պատմավեպը Քրիստոսին հետեւող հեզ եւ համեստ կանանց սխրանքի մասին է:

**Համաբարբառ Հայսմավուրք (նախաձեռնեցյան 6 խմբագրությունների)**

Օգոստոս եւ հոկտեմբեր ամիսների հատորներն են: Հատորները հրատարակության են պատրաստվել հրատարակչության տնօրեն Տ. Եզնիկ արք. Պետրոսյանի ղեկավարությամբ եւ խմբագրությամբ:

Վերոհիշյալ բոլոր աշխատություններն էլ տպագրվել են «Սարգիս Գաբրիելյան» հիմնադրամի մեկենասությամբ:

**ՔՐԻՍՏՈՆՅԱ ՀԱՅԱՍՏԱՆ**

Կրոնական, մշակութային, լրատվական երկշաբաթաթերթ

**Հիմնադիր՝**
Մայր Աթոռ Սուրբ Էջմիածին

**Հրատարակիչ՝**
«Քրիստոնյա Հայաստան» թերթի խմբագրություն

**Համարի պատասխանատու՝**
Նարե Սարգսյան

**Գրանցման վկայական՝ 624**

**Խմբագրության հասցեն՝**
Մայր Աթոռ Սբ Էջմիածին

**Հեռախոս՝ 517197**

**Էլ.փոստ՝ qh@etchmiadzin.am**

Ստոր. տպագր.
16.09. 2010 թ.

**Տպաքանակը՝ 2100**

**Գինը՝ 50 դրամ**